Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1787
1788
1789

1790
1791
1792

84
Г-96

# ՍԱՆԴՈՒԽՏ

## ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

### Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ
ԹՈՎՄԱՍ ԹԷՐԶԵԱՆ

Հայո՛ց կուսանք՝ նոր շուշան
Տեսէք ՚ի դաշտ Շաւարշան.
Հ. ՂԵՒՈՆԴ Վ. Ա. Մ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԹԱԴԷՈՍ ՏԻՎԻՏՃԵԱՆ [illegible]
1862

565

10075-57

891.99-2

# ԱՌ ՎԵՀԱԶՆ ՍԻՊՈՒՀ
# ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ
## ԱՐՔՈՒՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ

Ի՝ զմայլելի կուսին Հայոց մինչ ըղձիցանս առնում ոգեր,
Եւ զանձամ գերեզմանաւն՝ ուր երկնաւոր տեղան Ներշնչք,
Մաշտոցեալ սիրտ 'ի յերեր սփռեմ ծաղկունս և արտասուս,
Ո՛ Նորաթև իմոց մտաց Թևս յաւելեալ հրեղէնս 'ի Նիւս
Հրամայէ հոլաթևել ընդ ժամանակս և ընդ աշխարհս .
Եւ ինձ՝ որ սիրէի լոկ լռութեան և ամայեաց
Նուագել զոգւոյս ծածուկս՝ զի ստուերք յաղբիւրն իւրեանց սլացին
Ո՛ խրախոյս բառնայ փառաց Թևակոխել յասպարէզ ։
Դո՛ւ 'ի զարմ մեծ , և մեծ ես չքնաղագեղ հոգւոյդ 'ի ձիրս,
Ոչ գեղեցկին գաղափարաւ ըզցեալ կարծես և զերգս տնկես ,
Դու՛ որ յաղմկայոյզ խռնել ամպոց մոլոր կարծեաց
Ի՝ զլուսափիւռ խնդրես աչօք հետոյս Կուսին երկնաւորի
Ոյր հաղիւ յամպս անդ շողան ծալք վարդագոյն պատմուճանին ...
Քաղցրացի ապա և իմ Նորափետուր սլացեալ մտաց
Զ՝երախայրիս Ս՝եհիդ ձօնել ըղվաստակոցն երկնաղդեցիկ .
Եւ թէ 'ի հոյլ մտեննեացդ խառնեմ ծաղկունս ինչ խմոլսանին
Ոչ յուսամ փառս յաւելուլ Քեզ՝ այլ ընդունել փառս յանուանէդ ՚

# ՍԱՆԴՈՒԽՏ

## ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ

| | |
|---|---|
| ՍԱՆԱՏՐՈՒԿ | Արքայ Հայոց |
| ՍԱՆԴՈՒԽՏ | Դուստր Սանատրկոյ |
| ԵՐՈՒԱՆԴ | Սպարապետ Հայոց |
| Ա. ԹԱԴԷՈՍ | Առաքեալ |
| ՇԱՒԱՐՇ | Պալատական |
| ՎԱՀՐԱՄ | Պատգամաւոր |
| ԱՐՇԱԿ | Զօրապետ |
| ԽՈՍ | Դահիճ |
| ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՔ | |

Տեսարանն յԱրքունիս Սանատրկոյ. 'ի Ե. արարուած բանակ ապա դաշտն Շաւարշան.

## ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՍԱՆԱՏՐՈՒԿ ԹԱԴԷՈՍ ՇԱՒԱՐՇ ԵՐՈՒԱՆԴ

ԹԱԴԷՈՍ. Ինքն է ճշմարիտ Աստուածը՝ ով Թագաւոր, ինքը միայն Աստուած է: Այս Տիեզերքս որ բիւրաւոր հրաշալիօք զարդարուած է՝ իրեն աչքին դիմացը ոչինչ է, և ոչինչ ունի իր աւելի պէտքեցիկ Տիեզերքներով լցուած է իրեն համար. ինքը ըսաւ և ամէն բան եղաւ. ամէն բան զինքը կը քարոզէ: Մինչդեռ իր զօրութիւնը կը հռչակեն մրրիկք՝ որոնց մէջ ցասմամբ կը պտտի, և փայլակները՝ որ իր նայուածքներէն կը թափթփին, մինչդեռ իր զօրութիւնը կը քարոզեն ծովք՝ որ խռոված ալեններին իրենց հզօր արարչին հայելին են, և ուրիշ սանձ չունին իրենց անյագ կատաղութեան՝ բայց միայն իր յօնից սպառնալիքը. իր ձեռքը կը քա-

բողէ առաւօտեան անուշ հովը՝ որ իր զուարթ թեւիկներովը կարծես ծաղկանց արցունքը կը սրբէ, իր սէրը՝ անպատսպար թռչնոց ձայնը՝ որ բնազդմամբ աչքերը դէպ 'ի երկինք կը վերցընէ բոյնէն, և իր սէրը դարձեալ արևը՝ որ երկնից ընդարձակութեան մէջ կը թափառի՝ աչքերը դարձուցած դէպ 'ի Անեղին աթոռը որուն կարծես հրամանացը կը սպասէ:

ԱՆԱՍՏՈՒԱԾ. Ես ո՞ւր տեսնեմ քու Աստուծոյդ հետքերը:

ԹԱԴԷՈՍ. Քու աստուածոյդ աւերակներուն վրայ: Ինքը յաւիտենականութեան ամպերուն մէջ ծածկուած՝ Տիեզերաց վրայէն կախած է արդարութեան կշիռքը. հոնեն թագերը և թագաւորութիւնները, իր ձեռքն է որ անյայտ ճամբաներով կ'առաջնորդէ զմահկանացուն որ կը գոռոզանայ՝ չվախնալով հզօր ձեռքի մը գործիքն ըլլալ, սուրը որ կը փայլի՝ կ'սպառնայ՝ կը վիրաւորէ բայց վերջապէս ինքն ալ կը խորտակի. և իր գործած աւերակներուն վրայ ինքն ալ կը փշրի: Այն ձեռքը կը բարձրացնէ 'ըզմարդ ինչուան ուր որ որոշած է . . . և մինչդեռ բոլոր Տիեզերաց աչքերը դէպ 'ի այն հպարտը դարձած են՝ այն ամբարտաւան շէնքը կը կործանի կ'իյնայ. ինչպէս թանձր մուխը որ խաղաղ օդին մէջ կը դիզուի և իր մութ ձեռքին տակ արևն անգամ կը ծածկէ, բայց հովը փչածին պէս կը ցնդէ գայն . . . : Ո՞ւր են Բաբելոն, Նինուէ՝ քու բուրգերդ ո՞ւր են . . . այն ի՞նչ լռութի կը տիրէ ձեր ճամբաներուն մէջ . . . քու փառքդ ալ անշըշունջ աւերակացդ վրայ կը քնանայ . . . հո՞ն ուրեմն ո՞վ թագաւոր, հո՞ն գացէք դուք ալ՝ ո՞վ ժողովուրդք սորվելու համար . այն լռութիւնը ձեզի ամէն բան պատմէ . և կործանեալ բուրգերը աւելի սարսափեցնեն պիտի զձեզ՝ քան թէ երբ բիւրաւոր կտրիճներով պաշտպանուած էին . այն աւերակներուն նայեցէք . աստուածութիւն մը անոնց վրայէն անցած է . կարդացէք թէ այն խորտակեալ պարիսպներուն վրայ ինչ գրեր է Ամենակալին մատը . . . “ՈՂՋՈՒԹԻՒՆ” : . . .

ԽՐՈՒՍԱԴ. Արդարև վսեմ և գեղեցիկ գաղափարք.

ԱՆԱՍՏՈՒԱԾ. Ի՞նչպէս այդչափ հրաշք կրնայ գործած ըլլալ Աստուած մը որ մարդկանցմէ նախատալից կերպով խաչուած է:

ԹԱԴԷՈՍ. Նախատալի՞ց կը կոչես մարդկան համար մեռնիլ: Տիեզերք լի անօրէնութեամբք կորստեան վիհը հասած էր . արդարութեան սուրը երկինքէն երկիր կ'սպառնայր . . . երբոր յանկարծ ձայն մը, “Կեցի՛ր” գոչեց՝ “ահա

ամենուն տեղ ես կը մեռնիմ»։ այս ըսելով՝ սէ՜ր անպատում՝ Աստուած մը իր փառքը թողլով մարդ եղաւ.... Աստուած մը մեռաւ... այն աՀաւոր անդունդը որ կայ աստուածուն և ոչնչին մէջ՝ սէրը լեցուց...

ՍՐՈՒՀԱՆԴ. Քրիստոնէից այս գաղափարները որ կը լսեմ՝ կը կարծեմ՝ թէ ասոնք կամ մէյ մէկ խենդեն և կամ մէյմէկ աստուած։

ԹԱԴԷՈՍ. Ո՞վ կրնայ քրիստոնէի մը սրտին զգացածը բացատրել. քիչ կը Համարի ինքը իր Աստուծոյն սիրոյն կեանք մը միայն զոՀելը։

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Եթէ սիրոյ կրօնք կը կոչես այն որ արիւն և մաՀ կը քարոզէ՝ ո՜րչափ աւելի սիրոյ ըլլայ պիտի մեր կրօնքը որ Հեշտութեամբ կ՚ըլլայ։ Գեղեցի՜կ սէր՝ որ կոյս մը իր մանկութեան վարդերը արեանցը մէջ թառամեցընէ. երիտասարդը՝ որ Հայրենեաց պաշտպան մը կը խոստանար՝ գերեզմանին մէջ իր յոյսերը թաղէ։

ԹԱԴԷՈՍ. Քրիստոնէի մը Համար գերեզմանը անմաՀութեան դուռն է։

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Այդ անմաՀութեան դռնէն՝ շատերը անդին աշխարՀ խաւրեցի. բայց ձեր անխելք կրօնքը Հարիւր գլխով Հրեշին կը նմանի, որուն գլուխները որ չափ կը կտրէին՝ այնչափ նորէն կը բուսնէր։ Ո՜Հ, գիտնայի թէ արմատը ո՞ւր է, և խլէի։

ԹԱԴԷՈՍ. Պոռա՛. ինքը քեզի կը լսէ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Այո՛, պիտի կործանի գիտցաս քու Աստուածդ. իրմէ Հետք մ՚ինալ պիտի չմնայ երկրիս վրայ. ես ինքնին պիտի կոխկռտեմ իր տաճարները։ Ինքը պիտի չգտնայ ապաստան մը երկրիս վրայ՝ ցորչափ ապրի Սանատրուկ, ցորչափ այս քաջայաղթ սուրը ատրսափ ազդէ աշխարՀիս. պիտի չըսէ ուրիշ երգեր՝ բայց զողբաձայն Հեծեծանս իր Հետևողացը՝ զոր ես պիտի խողխողեմ։ Այլ եթէ ոխերիմ բաղդը՝ իրեն յաւիշտակել այս դաշխարՀ իմ ձեռքէս՝ աւերակներ միայն պիտի գտնէ՝ ուր տխուր լոյս մը պիտի արձըկեն իր Հրաբորբոք տաճարները։

ԹԱԴԷՈՍ. Սրբազդոյն խորան մը՝ աւելի Հաճոյ խունկ մ՚ունի մեր Աստուածը, և դու զայն չես կրնար կործել... մեր սիրտը և մեր արցունքը։ Զա՜րկ սպաննէ՜... մեր յետին Հառաչանքը քու փրկութեդ Համար աղօթք մ՚ըլլայ պիտի։ — Բայց գիտցիր թէ որ չափ ալ անօգուտ ըլլայ իր երկնայնամնութիւնը՝ եթէ ինքը ցասմամբ ելլայ իր աթոռէն՝ դողան պիտի երկինք իր նայուածքէն, և մինչև զու-

զարհուրած պիտի փախչին իր առջեւ՝ խուռն կայծակունք պի-
տի թօթափին գլխուդ վրայ, և
իւրաքանչիւր քայլիդ տակ նո-
րանոր անդունդներ պիտի բա-
ցուին: Արքա՜յ, նեղ են քեզի հի-
մայ Տիեզերք... և սակայն քիչ
ատենէն բոլոր փառօքդ հան-
դերձ՝ քանի մը թիզ հող միայն
պիտի գրաւես:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ա՛յո, կամ անձայն
երկրիս տակ՝ կամ բոլոր երկրիս
վրայ իշխան. ըն մանկական
եռանդեամբ ելայ ես առնուլ՝
Թադէոս. ինչպէս անտառք
մրրկին դէմ՝ այնպէս խոնարհե-
ցան ազգերը առջեւս. այն կրա-
րիճին ոտքին տակ կը կոխկրտ-
ուէր թշնամին՝ և իր արենա-
կալ սրոյն վրայ ՍԱՆԱՏՐՈՒԿԻՆ
գրուած էր՝ այն սուրը ձեռքիս
մէջ փշրեցաւ. բայց կենդանի է
դեռ նոյն սիրտը: Դեռ երիտա-
սարդ՝ աշխարհիս հետ պատերազ-
մեցայ և յաղթեցի. հիմայ ալեւոր՝
Աստուած մը զիս պատերազմի
կը հրաւիրէ: Տեսնա՜նք յաղ-
թութիւնը որո՛ւնն է: (ՄԵԿՆԻ)

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՊԱՆԴՈՒԽՏ ԵՒ ԹԱԳԱՒՈՐ

ԹԱԳԱՒՈՐ. Ի՛նչ անհաշտ ատե-
լուն կը սնուցանէ հայրդ մեր կը-
րօնքին դէմ:

ՊԱՆԴՈՒԽՏ. Դառն յիշատակներ
կը զարթուցանէ մտքին մէջ այս
գաղափարը: Բայց դու սէ՞ր ծե-
րունի՝ կրկնէ՝ կրկնէ՝ այդ սէ՞ր կը-
րօնքին նկարագիրը որ հոգիս
մխիթարուի:

ԹԱԳԱՒՈՐ. Եթէ մխիթարուիլ
կը բաղձաս՝ դիմէ իր ոտքը. քը-
րիստոնեայ մը իր վշտերը խաչին
պատուանդանը կը դնէ, ինքը ի-
րեն կը կանչէ զանոնք որ աշխար-
հիս թշուառութեանց տակ կը
հեծեն:

ՊԱՆԴՈՒԽՏ. Ո՛րչափ քաղցր է աշ-
խարհիս վշտերէն ազատելով այս
անձկալի գաւառներուն մէջ
թափառիլ. Ի՛նչ քաղցր է հա-
ռաչել մէկու մը դէմ՝ որ հառա-
չանքներդ կը կրկնէ. ո՛հ, ո՛րչափ
քաղցր է լալ Աստուծոյ մը դի-
մաց՝ որ լացեր է:...

ԹԱԳԱՒՈՐ. Ով որ առանձին իր
վշտայը մտածելով իր Աստու-
ծոյն դիմաց չէ կեցած արցունք
թափելու՝ այնպիսին դեռ չգի-
տեր ճշմարիտ հաճոյք մը ի՛նչ է:
Գթով մեր հոգւոյն վրայ կը
հսկէ ինքը՝ ինչպէս թռչուն մը
իր բոյնին վրայ:

ՊԱՆԴՈՒԽՏ. Ո՜հ, ո՛րչափ գթայ
պիտի օրհնողի մը որ վշտաց ով-

կիանոսի մը մէջ կ'ալեկոծի. ըսէ ինծի արդեօք այն գեղեցիկ ասպարէզներուն մէջ ուր սրտիս դիմաց կը բանաս՝ կրնա՞մ ես ալ սլանալ:

ԹԱԴԷՈՍ. Իր գրկերը բաց են զամենքը ընդունելու:

ՍԱՆԴՈՒԽՏ. Ո՜հ տէր՝ միտքս լուսաւորէ. և թէ որ հիմայ քու հոգիդ որ բոլոր Տիեզերքս կը լեցնէ՝ իմ քովս ալ կեցեր կը լսէ հառաչանքներուս, կ'իմանայ սրտիս բաբախմունքը, ո՜հ, դու գիտես իմ լեզուով չբացատրուելու անձկութիւններս:

ԹԱԴԷՈՍ. Զօրացիր՝ կոյս. յոյսդ իրեն վրայ հաստատէ:

ՍԱՆԴՈՒԽՏ. Ամէն օր կը տեսնեմ քրիստոնեաները անգութ մահուան դատապարտուած, և ինծի՝ որ անոնց չեմ կրնար օգնել՝ տխուր բանտ մը կ'երևայ այս մեծաշուք ապարանքս: Իսկ երբ արցունքներէ յոգնած աչքերս գոցուին՝ տեսլեններուն մէջ կը կարծեմ տեսնել խումբ մը երանելի ոգեաց որ ձիւնաթոյր պատմուճաններ հագած՝ ժպտելով ականջիս ասիկէն կը հրծծեն. “Չենսերնի սեկուր„:

ԹԱԴԷՈՍ. Յաւէտ համբերել, գերամարդկային զգացմամբ սիրել մարդկութիւնը. — ահա ինչ որ իմ պաշտած Աստուածս կը հրամայէ:

ՍԱՆԴՈՒԽՏ. Սիրե՞լ... ա՜հ, լսէ, հայր... չես գիտեր ո՜րչափ սրտառուչ յիշատակներ մտքիս մէջ կը զարթուցանես...:

ԹԱԴԷՈՍ. Կը մօտենայ ահա մէկը, և կը լսէ զմեզ, հեռանա՛նք... (ՄԵՆՆ):

# ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԵՐՈՒԱՆԴ

Սրտասասուալից 'աչօք հեռացաւ ինձմէ այն գեղեցիկ հրեշտակը... ո՜րչափ անուշ է ինծի կոխել այն տեղերը զոր կը կոխէ. շնչել այն օդը զոր ինքը կը շնչէ. երբոր աչքերն դիմացն եմ՝ լեզուս առաջ չերթար խօսք մը ըսելու, աչքերս չեն համարձակիր իրեն նայիլ, անծանօթ զօրութիւն մը զիս կ'սրդէ, իր պատկերը գեղեցիկ հրեշտակի նման՝ հոգւոյս մէջ կը հանդչի... ո՜հ, ի՜նչ քաղցր կուգային ինծի իր հառաչանքները այս նոր կրօնքիս վրայ... այո՜, Սանդխտին կրօնքը իմ կրօնքս ալ է: Եւ ի՜նչ կ'ըսեմ... մի բարկանաք ո՜վ ածք... սէրը միտքս խռովեց... բայց ի՜նչ, եթէ սէրը պաշտեմ՝ զձեզ պաշտած

չե՞մ ըլլար ուրիշ անուամբ. որովհետև թէ որ աստուած էք՝ սէր ալ պիտի ըլլաք, թէ որ սէր չէք՝ աստուած ալ չէք:. Իսո՞վ բնութեան կ'ապրի այն կարողութիւնը սիրտ որով հանդչեցընելու. ո՞վ գրեր է, որուն մէջ սէրը՝ այս բոցը որուն որչափ նիւթ աւելցընես՝ այնչափ աւելի կ'ուզէ: Բայց թերևս այս աշխարհը միայն փափագելու տեղ է՝ և ոչ փափագի մը կատարուելուն... թերևս օրորոցէն մինչև գերեզման եղած միջոցը շատ կարճ է, սիրոյ... թերևս անները այս ստուերները տուեր են՝ որ ինչպէս տղայն երփներանգ թիթեռնիկէ մը խաբուած ետևէն իյնալով կը խոտորի, այնպէս մարդ ատոնց ետևէն ինկած վազէ, ինչուան որ յանկարծ մահուան անդունդը թաւալի...: Բայց ի՞նչ յանցանք ունէր ոչնչութիւնը՝ ով դիք՝ որ էակ մը ըլլայ՝ կարողութիւն խմնայ՝ և այն կարօտը չլեցունի... Այլ ոչ մարդս է որ ինքզինքը կը խաբէ... այո. այս անձկութեանց հովուն մէջ այս մշտախառն ովկիանոսին մէջ՝ որուն եղերքը սևացեալ ժայռեր կը բարձրանան, ինքզինքը խաբելու համար, աստուածք մարդուս զմայլեցուցիչ ծաղկապսակ քնար մը տուեր են: Այս քնարը՝ մարդուս սիրան է. և իւրաքանչիւր կիրքերը՝ անոր թելերն են. անոր դիւթիչ ձայներէն ինքզինքը խաբելով մարդս կ'անցնի: Աւա՜ղ ուրեմն, ի՞նչ է եղեր մարդկութիւնը... ծաղիկներով զարդարուած դըւարակ մը՝ որ 'ողջակէզ ըլլալու կ'երթայ... և ո՞ւր է իր նեղանը... գերեզմա՜ն մը... գերեզմա՜նը՝ որուն անդունդը յաւիտենականութեան չափ խոր է: Ո՜հ, բանար ինծի գթած ձեռք մը ապառնոյն քօղը՝ և տեսնէի թէ երկինք ինծի ի՞նչ վճռեր են.. Ճակատագիրս իմանայի...: Ո՜վ դուք՝ որ սրտիս վշտերը և տարակոյսները կը ճանչնաք՝ գթա՜ծ աստուածքսիրոյ արցունքնե՞րն ալ չե՞ն բաւեր ջնջելու այն դառն վճիռները զոր երբեմն ձեր՝ արդարութիւն մարդուս ճակտին վրայ դրոշմեց:

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՆՈՅՆ ԵՒ ՇԱՒԱՐՇ

ՇԱՒԱՐՇ. Թող մեկզի տխրութիւնդ բարեկամ. վշտերու ալ վերջ մը կայ:

ԵՐՈՒԱՆԴ. Իմ վշտերս միայն կենացս հետ կրնան վերջանալ:

**ՇԱՒԱՐՇ.** Հզօրին աստուածք, և ինչ որ շատ անգամ տկար մահացուք չէին կրնար յուսալ՝ անոնք կը կատարեն. անյայտ են մարդկանց անոնց ճամբաները : Շատ անգամ մարդ ուղելով ապառնային քօղը վերցնել՝ չեղած և չըլլալիք դառնութիներ կը պատրաստէ իր անձին :

**ԵՐՈՒԱՆԴ.** Ո՜ւր էր թէ սուտ ըլլային վախերս՝ ինչպէս ինչուան հիմայ սուտ ելած են յոյսերս... կը կարծէի թէ սէրը երջանիկ պիտի ընէ զիս, բայց իրեն ծաղկափթիթ ճամբուն տակ անդունդներ կան... Ալ ծածկելու ժամանակ չէ, յայտնեմ քեզի իմ դաղտնիքներս՝ ո՜վ բարեկամ: Թերևս սիրոս իրեն արձագանք մը գտնելով մխիթարուի... կը սիրեմ... ո՜հ չեմ կըրնար այն անունը հնչել՝ որ սիրոս չխռովի... Սանդո՜ւխտը կը սիրեմ :

**ՇԱՒԱՐՇ.** Սանդո՜ւխտ... Հայոց թագուհի՜ն... արդարև սիրելի անձ... բայց ի՞նչպէս սկսաւ այս սէրը:

**ԵՐՈՒԱՆԴ.** Ալանաց դէմ պատերազմէն երբ կը դառնայի՝ դիտես թէ, բաղդը ինձի շնորհեր էր յաղթութեան փառքը... Սանատրկոյ կիսակործան դահը հաստատելէս ետև՝ արիւնաներկ սուրս փութացայ իր ոտքը դնել, ինքն ալ յաղթական բրաբիոնով մը ուզեց զիս փորձարկել : Փոմպէյան հանդիսականք՝ իշխաններ՝ զօրավարներ՝ զօրականք և ժողովուրդը. անցաւ իր դահը Սանատրուկ ալ... Սանդուխտ՝ այն սիրելի հրեշտակն ալ՝ հոն էր... աստուածուհւոյ մը նման իր հօրը քով նստած՝ նոր փառք կ՚աւելցնէր Հայոց դահուն. այն տասնըվեց գարունները որ զինքը սնած էին՝ իւրաքանչիւրը անցնելու ատեն՝ իրենց սիրոյ յիշատակ կարծես՝ իր ճակտին վըրայ մէյմէկ վարդ թողուցեր էին : Իրեն հօրը հրամանաւ ձեռքըն առաւ ոսկեղէն պսակը՝ և անուշ ծիծաղով մը ինծի յանձնեց... Կո՞ւզ գիտէք ասան գը՝ թէ ո՜րչափ այն ծիծաղը ինձի թագէն ալ անուշ եկաւ... տագնապայոյզ երեսը նայեցայ... և երկուքներնուս աչքերը իրարու հանդիպեցան : Թագաւորը մէկդին հայրենեաց փրկիչ՝ առաջինին կոչելով զիս կը գովէր, զօրականք մէկալ դին յաղթութեան գլուխ կ՚անուանէին զիս, ժողովուրդըն ալ ցնծութեամբ "Ապրիցէ,, ներով օդը կը թնդացնէր... Ես սակայն Սանդուխտին դիմաց կեցեր էի, և այնպէս կուգային ինձի այն արդարակները՝ ինչպէս երկնաւոր երազ-

նէրու մէջ յափշտակեալ հովւոյ մը՝ երկրիս նուաղ և հեռաւոր ձայները:

ՇԱՒԱՐՇ. Մտիկ յաջողէ իղձերդ:

ՆՈՒԱՐԴ. Փշալից տարակոյսներու մէջ կը ծփայ հոգիս: Երբեմն լուսարթ կ'երևակայեմ զինքը գրկացս մէջ, և ցնորելով կը կարծեմ թէ իրեն պատմելով անցեալ վշտերս և տարակոյսներս՝ անոնց վրայ այնպէս կը նայիմ՝ ինչպէս ալէկոծութենէ ազատած նաւավար մը դեռ խռովայոյզ ծովուն վրայ... երբեմն կը կարծեմ որ զիս կը մերժէ իրմէն... և այն ատեն ոչ այլ ինչ կը խնդրեմ յերկնուստ՝ բայց եթէ գերեզման մը ուր կարենամ անձս և թըշուառութիւններս ծածկել, գերեզման մը՝ որուն վրայ թերևս գթալով վերջապէս Սանդուխտ գայ և արտասուէ:

ՇԱՒԱՐՇ. Երկնից աստուածոց վրայ մի տարակուսիր. մեծ է անոնց զօրութիւնը. տառապեալ մահացու ին հառաչանքները հրեղէն թևերով կը սլանան այն աստեղազարդ գաւառներուն մէջէն մինչև Արամազդայ ածց այն ոտքը. և շատ անգամ իր հզօր աչքը տկար մարդուն վը դառնալով՝ զինքը վըշտաց վիհերէն երջանկութեան գահը կը բարձրացնէ:

ՆՈՒԱՐԴ. Ու ինչպէս այդպիսի յոյսերով մխիթարուիմ՝ քաջըդ Շաւարշ, ես որ աչքովս ահաւոր դիպուածի մը վկայ եղայ. լսէ: Գիշեր մը նստեր էի վշտացս մտածելու. Անահիտ նուիրական անտառներու ծայրերէն ամպոց վրայ արծաթի քօղեր սփռելով կարծես իրեն դաշ մը կը պատրաստէր անոնցմով. առուակները ալիքէ ալիք գլտորցընելով լուսնի պատկերքը՝ կարծես անոր երգեր կը խոխոջէին. անհնուայ լոյսը պալատներուն՝ մեհեաններուն և տաճարաց արծաթափայլ գըմբէթներուն վրայ կը հանգչէր. Աչքս Սանատրկոյ ապարանքը դարձուցի... Ով տեսիլ... Սանդուխտ ձեռքն կռթնած կը նստէր պատուհանին դէմ. ոչ ցնորած մտացս կ'երևար թէ լուսինը՝ այլ իր նայուածքը՝ որ բնութեան վրայ այն սիրելի խաղաղութիւնը կը սփռէ, իր աչքէն մարգրտանման արցունքներ կը ցողէին, եռանդուն հառաչանքներ սրտէն կը բղխէին. և այնպէս տըժգոյն և մելամաղձ էր իր ճակատը՝ որ հրեշտակ մը յարտօսր կը շարժէր:.. Բայց յանկարծ արիւնս երակներուս մէջ սառեցաւ.. իր ծոցէն անյայտ նշան մը հանեց՝ որ կը նմանէր քրիստոնէից աղանդին Աստուծոյն, և սրտաբուխ համբոյրներով խանդակաթ

աչքերը ատեն ատեն երկինք կը վերցընէր :

ՇԱՒԱՐՇ. Սարսափով լեցուցին զիս քու խօսքերդ՝ քաջդ Երուանդ, չըլլա՞յ թէ Սանդուխտ քրիստոնեայ եղած ըլլայ. կը դողամ այսպիսի բան մտածելու.. Բայց շատ անգամ կը տեսնեմ Թադէոս ծերունին՝ որ այս նոր վարդապետութիւնը կը քարոզէ, և Սանդուխտ զմայլած մտիկ կընէ. Սակայն դու Երուանդ՝ չե՞ս կըրցած Սանդխտոյ հետ տեսնուիլ:

ԵՐՈՒԱՆԴ. Ոչ կրնամ և ոչ կուզեմ... Այն որ իմ հոգւս պիտի մխիթարէր՝ աւելի կը վիրաւորէ զիս.. Թերևս երկինք զմեզ միատեղ ապրելու համար ստեղծեր էր, անծանօթ ձեռք մը՝ մեր սրտերը արդէն միացուցած է, բայց դառն տարակոյսներ հոգւս կը խռովեն.. Ասկէ վերջ ինձի միայն դեղ զինքը մոռնալն է. բայց ի՞նչպէս ընեմ, ո՞ւր երթամ... ուր ալ ըլլամ բնութիւնը կ՚անհետանայ աչքէս և իր լուսածիծաղ պատկերն ինձի կ՚երևայ: Իզուր հոգւոյս մէջ զգացած վիհս կը ջանամ լեցնել փառաց և յուսոյ երազներով. գաղտնի ձայն մը սրտիս մէջէն "Սանդո՜ւխտ," կը կրկնէ:

ՇԱՒԱՐՇ, Նա Սանդուխտը շնորհեն պիտի քեզի երկինք:

ԵՐՈՒԱՆԴ. Չափազանց երջանիկ կ՚ըլլայի իրմով երկնից անգամ նախանձելի: Ինքը թագուհի մըն է՝ ես՝ իր խոնարհ ծառաներէն մէկը.. ո՜հ ո՞ւր էր թէ ես բոլոր աշխարհիս թագերը ձեռքս ունենայի՝ որ ոտքը նետելով ըսէի. "Առ ատոնք ամէնքը իմ Սանդուխտս՝ և քու սիրտդ ինծի տուր.." : Բայց դու Շաւարշ՝ քու բարեկամիդ խնդրոյն մի զլանար, և մի ջանար ընդունայն տեղ իրեն դէմ կենալ : Դառն բաղդը գրօշմեր է ճակտիս վրայ սիրել և... ինձի դամբան մը պատրաստեր է.. թող ուրեմն որ ճակատագիրս կատարուի: Ալանաց դէմ ունեցած պատերազմնիս՝ յարմար առիթ է: Աստուածները որ կեանքս փրկելու միջոցները զլացեր են ինձի՝ անկից ազատելու ճամբան ահա կը ցցնեն. ուրեմն երթամ պատերազմիմ.. մեռնիմ: Բայց երբոր արիւնս երակներուս մէջ դադրած՝ սիրտս ալ չզարնէ՝ և շրթունքներս այն չափ նուաղին որ Սանդուխտին անունն անգամ չըկարենամ հնչել, ո՜հ մեր բարեկամութեան սիրուն ըլլայ, Շաւարշ՝ երթաս այս մարմնոյ մէջ բնակող հրեշտակին իմ սէրս յայտնես.. ըսես թէ՝ ինքը՝ թէպէտ անմեղ՝ իմ մահուանս պատճառ կ՚ըլլայ... ո՜հ գոնէ իմ գերեզմանս գայ արցունք մը թափելու. ( Մեկնի ):

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԱԵՐԵՐԱ

Թշուառ երիտասարդ․ ահա սէրը․ այնչափ բռնացած է կիրքը սրտին մէջ որ ունեցած յոյսերն անգամ չտեսնար․ եւ սրբոյ մօրս ջանամ՝ սիրտ ամէն բան յաջողցնելու , բայց իրեն յուսահատութեան պատճառը չեմ տեսնար․ արդէն Թադէոսը իր հանճարին համար կը սիրէ զինքը, իր երիտասարդութիւնը և միւս չքնաղ ձիրքերը բաւական են զինքը սիրելի ընելու ամենուն: Մանաւանդ եթէ իմանայ Թադէոսը Սանդխտոյ այս նոր աղանդին վրայ ձգած սէրը՝ ամենեւին չպիտի ուշանայ զանոնք միացնելու, մանաւանդ թէ, սիրով աճապարէ․․․ Երթամ ուրեմն զինքը գտնելու․․ Թեթեւ է ամէն աշխատանք զոր մարդ բարեկամի համար կը քաշէ:

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾՈՅՆ

---

# ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՍԱՆԱՏՐՈՒԿ ԵՒ ԱԵՐԵՐԱ

ԱԵՐԵՐԱ. Տէր արքայ՝ գոյժ մը ունիմ՝ քեզի տալու:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Որչափ մեծ ըլլան աղէտք՝ այնչափ աւելի կը փայլի յաղթականին զօրութիւնը:

ԱԵՐԵՐԱ. Չյագեցան մեհեանները այնչափ քրիստոնէից արեամբը որ իրենց զոհեցիր․ աւելի ահաւոր զոհ մը կը պահանջեն․․․ քրիստոնէից աստուածը ընդունեցաւ նաեւ․․․

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՞վ:

ԱԵՐԵՐԱ. Լեզուս առաջ չերթար:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ըսէ՛:

ԱԵՐԵՐԱ. Կը դողամ:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Սանդո՛ւխտը:

ԱԵՐԵՐԱ. Ա՛հա բանը:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Սանդո՛ւխտ․․ իմ աղջի՛կս․․ քրիստոնեա՛յ․․ Ո՛վ

անակնկալ հարուած . . . :

ՇԱՒԱՐՇ. Բայց դեռ . .

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ա՛հ մի ջանար զիս մխիթարել . . . մխիթարութիւնը թեթեւ վշտերու համար է . . դեղերը կը զայրացընեն միայն մահաբեր խոց մը : . . . Սանդուխտը քրիստոնեա՜յ : Բայց բաւ է ինձի Շաւարշ՝ ապահո՞վ ես . . .

ՇԱՒԱՐՇ. Դժբաղդ դարձար շատ ապահով . .

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՛վ դիք, քրիստոնեա՛յ է ուրեմն Սանդուխտը . . աւա՜ղ ինձ . . այս կրօնքը ընդունած ատեն հայրը մտքէն չանցա՞ւ :

ՇԱՒԱՐՇ. Անդարձ են ճակատագրին պատգամները . փութանք միայն թշուառութիւնը թեթեւցնելու :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ի՞նչ ընելու եմ . . թագաւոր եմ . . հայր եմ . . Արամազդը կը պաշտեմ : .

ՇԱՒԱՐՇ. Տէր արքայ՝ մեծ թշուառութիւնք եթէ չարութեան համար կը խօսին, այլ առաքինոյն սիրտը փորձելու : Եթէ ինձի ալ ներէք՝ յայտնեմ կարծիքս : Ծանօթ է ամենունեթէ, ինչուան հիմայ Սանդուխտ իր հօրը արժանաւոր դուստր եղած է : Իր միտքը՝ որ երկրիս վրայ հանգչելու տեղ մը չգտնէր՝ խաբուելով քրիստոնէից նոր մոլորութեն որ մէկ ըռնելով կերթա՛ն, զայն ընդունեցաւ : Բայց դեռ քու աղջիկդ է՝ քեզի հնազանդ, և մոլութիւնն ալ ինչպէս կ'երեւայ շատ խոր արմատացած չէ սրտին մէջ . ջանա՛ ուրեմն զինքը համոզել : Սպառնալիքը ընդունայն է. որովհետեւ քրիստոնեայք խելագարած՝ որչափ տանջես զիրենք այնչափ կ'ուրախանան : Երազի մը պէս է կեանս այս աշխարհքս, իր հաճոյքներն ալ վշտերն ալ ունայն երազներ . իրենց խղճերը ապառնոյն վրայ կեդրոնացած է : Փորձով ալ տեսեր ենք որ իրենք աւելի յօժարութեամբ կը մատուցանեն իրենց կեանքը դահճին որպէս՝ քան թէ մեր ամենէն կարիճ նահատակները արեանց դաշտին վրայ . և մինչդեռ իրենց արիւնոտ դըլուխը փոշւոյ մէջ կը թաւալի, եթէ բառ մը արտասանեն ՍԷՐ է : Ուրեմն ջանալու է Սանդըխտին միտքը դարձնել քաղցրութեամբ . և որովհետեւ չափահաս օրիորդ մըն է, աւելի յարմար բան մը չեմ տեսնար քան պսակուելու . մայրական խնամքը և զբաղմունքը՝ սիրելի ամուսնի մը դողար գրկախառնութիւնները՝ իր մըղայական երազները կը փարատեն :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Բայց ո՞վ կայ իրեն արժանաւոր և սիրելի

ՇԱՒԱՐՇ. Քաջն և հայրենասէր Երուանդ :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Երուա՜նդ . . բայց

Սանդուխտը ի՞նչ կըսէ :

ՇԱՒԱՐՇ. Իր բերնէն իմանանք, երթամ զինքը կանչելու :

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՍԱՆԱՏՐՈՒԿ

Ի՞նչ սարսափելի տարակոյսներու մէջ հոգիս կը ծփայ... և դեռ չհոգնեցա՞ն երկինք ինծի հարուածներ իջեցնելէ.. չսպառեցա՞ն երկնից կայծակները ...ո՛վ բաղդ ոխերիմ :..Հանգըստեան տեղ մը տուէք ինծի՝ ո՛վ դիք՝ և ահա ձեզի կը յանձնեմ բոլոր աշխարհս որ դողաց իմ նիզակէս :..Ճանչցայ փառքը՝ և կ՚արհամարհեմ... անտահման անապատ մը շնորհեցէք ինծի՝ որուն ընդարձակութեը մէջ փշրին և անհետանան երկրիս աղմուկները. հոն խաւար ճակատս աղջկանս գիրկը հանգչեցընեմ..:

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՆՈՅՆ ԵՒ ՍԱՆԴՈՒԽՏ

ՍԱՆԴՈՒԽՏ. Հա՛յր...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Դո՛ւստր սիրեցեալ..

ՍԱՆԴՈՒԽՏ. Ուրախ եմ որ զիս կանչեցիր. ի՞նչ մխիթարութիւն քու գիրկդ ըլլալ..:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Նոյն ուրախութիւն հայրդ ալ զքեզ կ՚տեսնէ:

ՍԱՆԴՈՒԽՏ. Բայց ինչո՞ւ տխուր կ՚երևաս :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Թագաւորական ճակտի մը վրայ երբեք երկինք չեն արձակեր երջանկութեան նշոյլը... կասկածը.:. հոգք...

ՍԱՆԴՈՒԽՏ. Բայց հիմայ մէկդի թող հոգերդ՝ հայր. երեսս նայէ. թէ ոչ ինծի ալ վշտերդ դէմ հաղորդէ. կ՚ըսեն թէ ամենէն սրտաճմլիկ վշտերը հաղորդուելու որ ըլլան՝ կը թեթևնան :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՛հ քովս կեցիր դուստր իմ Սանդուխտ. քու ձայնդ սիրոյ հրեշտակին պէս քաղցր է հոգւոյս. թող աշխարհ իրենց մթին թևերով ծածկեն սիրտս. դու որ սիրոյ համար բանտըծուեր ես ժպտէ, Սան-

դուխտ՝ որ Հայրդ սփոփուի ։

ՍԱՆԴՈՒԽՏ. Քանի՜ անգամ եղած է որ քու վիշտերդ մխիթարելու եկած եմ. և երկուքնիս՝ քնոյ մէջ ընկղմած Հայաստանին վրայ իրեն պահապան ոգւոյն պէս հսկած ենք ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Կը սիրե՞ս Հայրդ Սանդուխտ...: Գիտե՞ս ի՛նչ է Հայր մը ։

ՍԱՆԴՈՒԽՏ. Ո՜հ ի՞նչ կըսես Հայր... եթէ զքեզ չսիրէի՝ զով կրնայի սիրել. սրտիս զգացմանցը վկայ ըլլան աս իմ արցունքներս. Թագաւորի աղջիկ ըլլալուս չեմ ուրախանար՝ այլ Սանատրկոյ ։ Երբ դու անձկաւ կաթոգին համբոյրներ ճակտիս վրայ կը դրոշմես՝ աւելի քաղցր և գեղեցիկ կ'երևայ ինձի բնութիւնը, աւելի ախորժով կը սըլանան շրթունքներէս սրտեռանդն աղօթքները...։

ՍԱՆԱՏՐՈՒԿ, Դուստր իմ՝ ճըշգրիտ պատկեր՝ երջանկացեալ մօրդ ։

ՍԱՆԴՈՒԽՏ. Այն դառն ժամէն 'ի վեր որ մայրս այս արտասուաց հովտէն երջանկաւոյն աշխարհքներ թռաւ՝ կրկնապատկեցաւ վրադ սէրս ։ Հայր ալ մայր ալ դու ես ինձի... բայց ո՜հ գաղտնիք մը ունիս ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Դա՜ռն գաղտնիք զոր ըսել չեմ կրնար, և չըսելն ալ անհնար է ։

ՍԱՆԴՈՒԽՏ. Ի՞նչ է. նոր խռովութիւնե՞ր կան, պատերա՞զմ՝ վըտա՞նգ. ուր որ ըլլաս պատրաստ եմ հետդ գալու՝ որ գոնէ քովդ 'ի ծունր իջեալ երկնից օգնութիւն խնդրեմ քեզի համար ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Լսէ ուրեմն, ըզքեզ ամուսնացնելու միտք ունիմ... Երուանդ քաջ զօրավարէն 'ի զատ ալ արժանաւոր անձ մը չեմ գտնար քեզի ։

ՍԱՆԴՈՒԽՏ. Հայր՝ կամքդ ըլլայ ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Հանդէսը անյապաղ պիտի կատարուի. արդէն ամէն բան պատրաստ է Նաւդկան մեհեանը ։

ՍԱՆԴՈՒԽՏ. (Մեկուսի) ։ Ո՜վ տէր.. Նաւդկա՞ն մեհեանը.

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ի՞նչ կը խորհիս Սանդուխտ ։

ՍԱՆԴՈՒԽՏ. Հայր զիս երկինք դժբաղդ ստեղծեր են...

ՍԱՆԱՏՐՈՒԿ. (Մեկ.) ։ Կիմանամ տրտմութեանը պատճառը. բայց փութամ ամէն բան 'ի կարգի դնելու ։ (Բարձր) Պատրաստ լեր ուրեմն ։ (Մեկնի)

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՍԱՆԴՈՒԽՏ

Գնա՛. երկնից պատգամներդ կատարուէին.. գնա պատրաստէ՛ սեղանը՝ և զոհը պատրաստ է. ո՞ւր կոյսը գառնուկ... ո՞ւր ապաստանիմ,. սէր՝ փառք՝ հայրենիք մէկդիէն զիս կը հրաւիրեն՝ մէկալէն Աստուած մը իր արիւնաթաթաւ գրկերը կը տարածէ; (Ծոցէն խաչ մը կը հանէ): Ով սիրելի մօր մը յիշատակը՝ երկնային խաչ. ինձի անծանօթ Աստուած՝ զոր վշտերուն համար սիրած եմ. երբ որ իմ մայրս յաւիտենականութեան դուռը հասած էր՝ չգտնելով ուրիշ սիրոյ նշան մը զքեզ տուաւ ինձի քու վրադ իր յետին համբոյրն դրոշմելով ... դու իմ սրտիս հետ այն ատենէն 'ի վեր միացած կը լսես անոր ամէն բարբառմունքը... ո՛հ քանի՛ անգամ քու որբանուէր ոտքերդ իմ արցունքովս թրջեցի. հիմայ որ ալ չեն բաւեր բոլոր աշխարհային յոյսերը հոգիս մխիթարել՝ ո՛հ դու ինձի քու Աստուածային թևերդ բաց, հոն ապաւինիմ ինչպէս մատաղ աղաւնի մը որ աչքերը վախէն գոցելով մօրը գիրկը կը փախչի... հոն իմ հոգնած և բազմավիշտ ճակատս հանգչեցնեմ:.. Բայց հոս արիւնի պէտք է... հա՛յրս զօրացուր երկինք իմ բազուկս.. խրախուսէ սիրտս. իմս ըլլայ յաղթանակը, և քեզի փառքը: (Ելնէ կ'երթայ):

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՆՈՅՆ ԵՒ ԹԱԴԷՈՍ

ԹԱԴԷՈՍ. Կեցի՛ր ո՞ւր կը դիմես՝ Հայոց Թագուհի,

ՍԱՆԴՈՒԽՏ. Աստղկան տաճարը՝ սիրոյ զոհ մը մատուցանելու:

ԹԱԴԷՈՍ. Ո՛հ տէր մոռցա՞ր որ քրիստոնեայ ես

ՍԱՆԴՈՒԽՏ. Գիտեմ երթամ ածները և իրենց մեհեանները կործանելով այն աւերակաց վրայ Աստուծոյ զոհ ըլլալ:

ԹԱԴԷՈՍ. Դու չե՞ս տեսներ որ չորս կողմանէդ ահաւոր վտանգներ կան:

ՍԱՆԴՈՒԽՏ. Թող սասանի աշխարհք. անվեհեր կը դիմեմ ես. Աստուած մը հետս է:

ԹԱԴԷՈՍ. Փորձութեանց համբերէ՝ բայց ինքզինքդ մի՛ նետեր:

ՍԱՆԴՈՒԽՏ. Թող երթամ ցը-ցընեմ թէ, քրիստոնեայ կոյս մը իրենց ամէն ածններէն հզօր է:

ԹԱԴԷՈՍ. Բայց մահը քեզի հոն կ'սպասէ:

ՍԱՆԴՈՒԽՏ. Ամէնքնիս ալ մեռնինք պիտի, բայց գեղեցիկ մահ մը գտնել չենք կրնար ամէնքնիս:

ԹԱԴԷՈՍ. Ինչ որ թեթեւ կ'երեւայ հեռուստ, ահաւոր է մօտէն:

ՍԱՆԴՈՒԽՏ, Ու ոք կրնայ արգելել սիրտ մը զոր Աստուած կը մղէ:

ԹԱԴԷՈՍ. Հայոց թագուհին երկինք պատրաստեր են քեզի յաղթութեան պսակը. փութանք երջանկութեան ժամը հասաւ... խաչը ձեռունիս փութանք սրեան ասպարեզը, մէկ տեղ յաղթանակելու կամ մեռնելու:

ՍԱՆԴՈՒԽՏ. Օ՜խ մինակ թող մի՛ ծերունի՛ն եթէ, հետագաս՝ հայրըս վրադ թափէ պիտի իր բարկութիւնը:

ԹԱԴԷՈՍ. Ով Տէր... պիտի հասնէ՞ր ուրեմն տեսնելու որ սէրդ կը զօրացնէ տկար կոյսերն անգամ՝ մահւընէ չվախնալու. ուրախեմ. թող ես ալ՝ ես ալ թող մեռնիմ:

ՍԱՆԴՈՒԽՏ. (Ծնրադրելով) Պսակն ու ուրախական պատղակները... ինձի համար են... Հայր մ՚օրհնէ զիս եւ ողջմամբ մնա... ահա փորձութեանց ժամը հասաւ... գտանութենց բաժակը ձեռքս է... ո՜հ ազատէ Աստուծոյ որ զօրացնէ զիս.. (Կ'երթան):

ՎԵՐՋ. ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾՈՅՆ

---

# ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԱՒԻԱՐԸ ՍԱՆԱՏՐՈՒԿ

ԱՒԻԱՐԸ. Օ՜, աւարտ ձայնեբով կը թնդայ այս երջանիկ օրը. այո՛ Տէր՝ վասն զի Հայաստան իրեն ազատարարին աղջիկը հարսանեկան տաղատար մերձենալ կը տեսնէ. Կը փառէն Հիմենեան ջահերը. ուրախութիւն կը ղեղու ամէն սիրտ: Ամէնքն այս օր ուրախ են՝ Տէր արքայ, եւ քու սրտմութիդ ի՞նչ է:

ՍԵՆԵՏՐՈՒՆ. Ես ալ ուրախ եմ Հաւարշ, այս երջանիկ եմ..: Բայց ինչո՞ւ կ'ուշանան պատգամաւորները զմեզ մեհեանը հրաւիրելու:

ԸԵՒԵՐԸ. Թագաւորավայել հարսանեաց պատրաստութիւնները միշտ սովորականէն աւելի ժամանակ կը պահանջեն: Այն վայրկեանէն առաջ որ յաւիտեան զերենք միացընէ, պիտի՝ քող մը կզգէան սիրականք. և որչափ մարդ երջանկութեան կը բաղձայ՝ չեմ գիտեր ինչպիսի՛ բնաւ դիմամբ երբոր երջանկութեան կը մօտենայ՝ դողդողալով անոր ծոցը կ'երթայ.

ՍԵՆԵՏՐՈՒՆ. Սարսափելի դաղափար մը կը խռովէ զիս. քանի որ Սանդուխտ հարսանեկան պատմուճանները կը հագնէր՝ աչքէն՝ գաղտնի արցունքներ կը սահէին:

ԸԵՒԵՐԸ. Ինքնայօրդօր կը վազէն արցունք. ամենէն երջանիկ վայրկեաններու մէջ ալ. կամ անցեալ վշտերուն հետքերը ջնջելու համար կամ նորերուն երկիւղէն:

ՍԵՆԵՏՐՈՒՆ: Դժմարիտ են խօսքերդ՝ բայց իմ սիրտս ահաւոր տագնապներու մէջ կայլէկոծի. յուսոյ և երկիւղի մէջ կը ծփամ ... ո՜հ ինչո՞ւ այնչափ կը սիրեմ աղջիկս՝ կամ ինչո՞ւ իր սիրածներն ալ չեմ կրնար սիրել, ինչո՞ւ իր Աստուածը կատեմ: Արդեօք այն արիւնները որ թափեր եմ ինձմէ վրէ՞ժ կը խնդրեն, կամ թէ թագաւորի յանցա՞նք է հայր ըլլալ.

ԸԵՒԵՐԸ. Արդարութիւն և իմաստութիւն թագաւորներուն դահակից ըլլան պիտի, և մեծացած Աստուածք կը հոգան:

ՍԵՆԵՏՐՈՒՆ. Բայց ե՞րբ:

ԸԵՒԵՐԸ. Երբենք գիտեն:

ՍԵՆԵՏՐՈՒՆ. Լսելի է ինձ լոյսը. երբոր աչքերս ՚ի քուն փակուին կապուտ ձեռք մը կարծես հոգւոյս վրայ կիջնայ, և եղերական ձայն մը ականջէս մահուան երգեր կը թնդացնէ: Յետոյ կարծես թէ թևերով աղջիկս ինձմէ կը փախչի և կը թողու իմ հոգիս ամայի ծովեզերքի մը պէս յորում փրփրալով կ'ուգան ծովերը փշրիլ: Հայր թշուառ. աղջիկս ազատեցէք ո՜վ աստուածք:

ԸԵՒԵՐԸ. Ահա շտապաւ պատգամաւոր մը կ'ուգայ դէպ'ի մեզ:

ՍԵՆԵՏՐՈՒՆ. Տխուր նախազգացմունք մը զիս կը խռովէ, ինչո՞ւ այդպէս դողկադեմ է:

# ՏԵՍԱՐԱՆ Բ.

## ՆՈՅՆՔ ԵՒ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆ

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ի՞նչ լուր կը բերես ինձի Վահրամ: . .

ՎԱՀՐԱՄ. Տէր արքայ . . .

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Արդարացի էր երկիւղս . . . խօսէ . . . կատարուեցա՞ւ հանդէսը.

ՎԱՀՐԱՄ. Այո . . բայց . . .

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Խօսէ՝ մահուան վճիռս ալ ըլլայ խօսէ: . .

ՎԱՀՐԱՄ. Ըստ քու հրամաննիդ ամէն բան կարգադրելէն վերջը՝ ահա Սանդուխտ և Երուանդ ձեռք ձեռքի տուած կը մտնէին: Արամազդայ տաճարին գմբէթը՝ նման աստեղազարդ գիշերուան մը՝ բիւրաւոր լոյսերով կը շողշողար . . . ասդիէն զօրականք, անդիէն ժողովուրդք անհամբեր կ'սպասէին. քահանայապետը նախկին աղօթքները կը մրմնջէր. կոյսը՝ որ վերէն 'ի վար ճերմակներ հագուած և ճակատը ծաղիկներով զարդարած, աւելի աստուածուհւոյ կը նմանէր քան թէ մահկանացուի, ծիծաղ շրթունքով առաջ եկաւ և Քահանայապետին՝ որ կըսկսէր աղօթքները մատուցանել „կեցի՛ր՝ ըսաւ. և դառնալով Երուանդին դէմ. կը խոստանա՞ս ինծի հաւատարմութիւն:

Երիտասարդը զարհուրած ապշած այսպիսի հարցմանն՝ վերայ՝ շառագունած երեսը կրնայէր. ահա մօտեցա՛ւ „վայրկեանը, աւելցուց օրիորդը՝ այն վայրկեանը՝ ոհ իմ Երուանդս՝ որ յաւիտեան միանանք պիտի կամ յաւիտեան զատուինք": Աս ըսելով առաջ անցաւ, և աստուածոց երեսն 'ի վեր գոչեց". Փայտէ և քարէ Աստուածներ, այսպիսի մարդիկներ խաբելնիդ չբաւեց, հապա կը յանդգնիք ճշմարտին Աստուծոյ երկրպագուները հրապուրել. ինկէք՝ կործանեցէք և ձեր աւերակներուն վրայ ճըշմարտին Աստուծոյ սեղանը կանգնեմ: Ինչպէս երկրաշարժի մը առնէն լեռները իրենց հիմունքներէն կը դողան՝ այնպէս կ'երերային մեր Աստուածները՝ ինչուան որ կործանեցան ու փշրեցան: . . . Սանդուխտ զըւարթութեամբ Երուանդին ձեռքէն բռնած առաջ կ'երթար . . . բայց զայրացին ամբոխը և զօրականք մակկեան աղայակներով խուռն անցած կ'ուզէին ամպարիշտը սպաննել: Ինչպէս բուռնհեղեղ մը բարձր ժայռէ անդունդի մը մէջ դահավէ-

10075-57

ժնլով լոյսադին կատաղուի ալեք ալիքի կը խառնէ՝ կը դառնայ՝ կը փրփրի՝ կը շառաչէ՝ այսպէս ամբոխը տաճարին մէջ, որ արեանց ասպարէզ դարձեր էր.. Կը շողան սուրերը օդին մէջ, վահան վահանի բախելով ահագին ձայնմունքներ կը գործեն. մայրը իր որդին կը՛ խնդրէ հերարձակ. ազգին արտասուալից մայրը կը կանչէ, ամուսին ամուսնի անուն տալով կը խնդրեն մէկզմէկ. վրէժխնդրութեան՝ ցասման՝ ոգւոց աղաղակք կը թնդացնեն մեհեանին գմբէթը. բայց Երուանդ կայծակի պէս ամբոխին մէջէն սլանալով վահան կ՚ընէ իր մարմինը անձկալի կուսին. Սեցէք՝ կը կանչէ՝ յիշեցէք որ Սանդուխտ Սանատրկոյ աղջիկն է... ես եմ յանցաւոր՝ ես.. և եթէ ձեր կատաղութեանը զոհ մը կ՚ուզէք ահա ես կամ: Բայց ամբոխը ոչ միայն չէր խաղաղեր՝ այլ ևս քան զևս զայրանալով երկուքըն ալ խողխողել կ՚ուզէին:.. Ահա զէնքերուն շառաչինը անկից ալ կըսուի... փութա՛ տէր արքայ՝ օգնորդ ազատելու:

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Աս վերջի հարուածը պատրաստեր էիր հօրդ՝ ամբարիշտ օրիորդ. անօրէն սուր՝ շատ.. հանգչեցար քու պատեանիդ մէջ... ո՛վ Աստուածներ զօրացուցէք զիս որ ձեր վրէժը լուծեմ:..

ԵՐՈՒԱՆԴ. Կեցի՛ր տէր արքայ.. յիշէ.. Սանդուխտն է. հայր ես..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Սրտիս մէջ մ՚արթընցնէր բնութեան ձայները: (երթայ)

ԵՐՈՒԱՆԴ. Աստուածք հա՛շտ են քեզի հետ... աղջիկդ պահէ... այլ չանսար ինծի... ո՜հ ինչ շուտով մարդուս երջանկութիւնը 'ի վերջ կը փոխուի.. փութամ զինքը համոզելու՝ խաղաղելու (մեկնի):

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՍԱՆԴՈՒԽՏ (Ձեռքերն կապուած)

Սոսկալի ամբոխ՝ կեցէք. այն ծարաւի զէնքերնիդ որ օդին մէջ կը շողան իմ արեամբս յագեցնեմ սիրտս:... Ո՜հ ինչ վիճակի մէջ եմ.. կրօնամոլ ամբոխ մը զիս կը փնտռէ.. ոտքիս տակ կործանեալ աստուածները կը մռնչեն. ապառնալից սուրեր գլխուս վրայ կը շողան:.. Սանդուխտ մինակ է... ո՜հ

չէ . . . գթած հրեշտակ մը իր հրեղէն թեւերուն վրայ հառաչանքներս Ամենակալին առջը կը տանի . . . իսկ հիմա . . . արդեօք այս դէպքը միտքը բանա՞յ պիտի՝ թէ աւելի վայրացնէ . . գտան կասկած՝ ամեն ցաւերէ սարսափելի՝ բաւական սիրտս կեղեքեցիր . . . երթամ նայիմ ո՞ւր է ( Երթալու ատեն )

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՆՈՅՆ ԵՒ ԵՐՈՒԱՆԴ

ԵՐՈՒԱՆԴ . ( Մտնելով առանց տեսնելու ) Ո՜հ յաղթեցի վերջապէս . . . վերջապէս դուն ազատ ես :

ՍԱՆԴՈՒԽՏ . Ով տէր . . . ինչ կատաղութիւն կը փայլատակէ աչքերուդ մէջ . . . արդեօք իմ սէրս գրգռեց ամբարիշտ զարձուց· ուրեմն այն որ գրկացս մէջ է՝ ուխտադրուժ մը՝ ապստամբ մին է . այդ արիւնը որ կը կաթի սուրէդ՝ ո՞ւմ է : . .

ԵՐՈՒԱՆԴ . Ընկացդ դէմ դաւաճաններուն . . . հայրդ . . . փութա՛ , փախչինք . . .

ՍԱՆԴՈՒԽՏ . Ո՜հ . . մահը ինծի չըսարսափեցնէր՝ այլ յանցանքը . և երկու չարեաց մէջէն լաւ է ինձ անմեղ կորսնցընել զքեզ՝ քան վրիժապարտ փրկել . . ( Լալով Երթալ )

ԵՐՈՒԱՆԴ . Ով թշուառ . . . չես տեսներ ինչ թշնամիներ՝ ինչ փառանքներ կան չորս կողմդ . . . ո՞ւր կը դիմես . .

ՍԱՆԴՈՒԽՏ . Մահուան : . .

ԵՐՈՒԱՆԴ . Չես կրնար քու հածոյիցդ համեմատ գործածել կեանք մը՝ որ ուրիշի հետ կապուած է :

ՍԱՆԴՈՒԽՏ . Առաջին պարտքը կրօնքն է :

ԵՐՈՒԱՆԴ . Եւ ո՞ր անողորմ կրօնքը կը սորվեցնէ քեզի թողուլ ամուսին մը առանց իրեն յետին ողջոյն մը տալու .

ՍԱՆԴՈՒԽՏ . Հեռու Եկուր ուրեմն .

ԵՐՈՒԱՆԴ . Ո՞ւր ապաւինած .

ՍԱՆԴՈՒԽՏ . Աստուծոյ .

ԵՐՈՒԱՆԴ . Ո՜հ . . գնա Աստուծոյդ . . . յաւիտեան կը բաժնըւինք իրարմէ . . ողջամբ մնա . .

ՍԱՆԴՈՒԽՏ . Զօրացուր զիս Աստուած իմ . . դու արտասուք ջնջեցին սրտէս իր պատկերը՝ որ սէրը հոն դրոշմեց :

ԵՐՈՒԱՆԴ . Այո , մոռցիր զայն որ թշուառութիւնը միայն օժիտ բերաւ քեզի . . բայց գիտցիր . . թէ ինքն զքեզ կը պաշտէ :

ՍԱՆԴՈՒԽՏ . Ո՜հ լռէ : . .

ԵՐՈՒԱՆԴ. Թէ՛ դու ազատես..

ՍԱՆՏՈՒԽՏ. Ո՛վ երկինք..

ԵՐՈՒԱՆԴ. Իսկ թէ ինքը քու տեղդ կմեռնի (մեկնի):

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՍԱՆՏՈՒԽՏ ԵՒ ՇԸԻՄԱՐ

ՍԱՆՏՈՒԽՏ. Ո՞ւր կերթաս... քու՛ր ինձ Երուանդ.

ՇԸԻՄԱՐ. (Մօտենալով) Ինչու խառուեր ես Թադէոսի.

ՍԱՆՏՈՒԽՏ. Ահա Երուանդ մեռնելու կերթայ.

ՇԸԻՄԱՐ. Մի՛ փախնար.

ՍԱՆՏՈՒԽՏ. Ի՞նչպէս... ո՛չ ապաքէն ինքը ազատամտութեան դրդեց հիմայ բոլոր ժողովուրդը.

ՇԸԻՄԱՐ. Այո.. բայց որովհետեւ ինքը մեր Թադէոսին կեանքը ազատեց ներումն շնորհուեցաւ իրեն:..

ՍԱՆՏՈՒԽՏ. Ո՛վ ուրախութիւն:..

ՇԸԻՄԱՐ. Բայց լուր եկաւ թէ թշնամիք պաշարեր են մեր քաղաքը. եւ հոն վճռուեցաւ որ երթայ Երուանդ պատերազմելու։

ՍԱՆՏՈՒԽՏ. Գոնէ մէկ անգամ մ'ալ պիտի չկարենա՞մ տեսնել զինքը:.

ՇԸԻՄԱՐ. Այո. ահա կուգայ.. (մեկնի).

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՍԱՆՏՈՒԽՏ ԵՒ ԵՐՈՒԱՆԴ

ԵՐՈՒԱՆԴ. Քու շնորհքներէդ լսեցի իմ անունս.

ՍԱՆՏՈՒԽՏ. Երուա՛նդ, Երուանդ ինչո՞ւ կը չարչարես Սանդուխտը.

ԵՐՈՒԱՆԴ. Սանդուխտ քեզի համար անթիւ վտանգներ կը դիմադրաւեմ եւ դու զիս կը մերժես.

ՍԱՆՏՈՒԽՏ. Զքեզ... ո՜հ որովհետեւ հասա վերջին վայրկեանն յորում իմ եւ քու մէջդ գերեզման մի անջրպետ պիտի ըլլայ՝ դիտցիր որ Սանդուխտայ բոլոր մանկութեան երազները ու իղձը դուն ես. եւ հիմայ ոչ եթէ զքեզ նուաղ կը սիրէ այլ իր Աստուածը քեզմէ աւելի..

ԵՐՈՒԱՆԴ. Ով քաղցր բարբառ... ո՜հ երջանիկ վայրկեան..

ՍԱՆԴՈՒԽՏ. Բայց մի մերձենար անոր.. գիտցիր թէ ինքը ծաղիկ մ'է որ խաչին առջը պէտք է թառամի... Հաշտութեան զոհ մը երկնից և վրիժապարտ Հայաստանին մէջ։. Գնա փութա յաղթութեանց դաշտը .. իմ արտասուքս և թերևս արիւնս 'ի գութ շարժեն զերկինըս քու վրադ։.. Բայց երբ փառօք դառնաս՝ ոչ այլ ինչ պիտի տեսնես Սանդուխտէն, եթէ ոչ գերեզման մը խոնարհ խաչի մը ստուերին տակ։..

ԵՐՈՒԱՆԴ. Ի՞նչու այդպիսի տխուր մտածմունքներով կը տառապիս։

ՍԱՆԴՈՒԽՏ. Այնչափ դարուց ամբարշտութիւնը դըրդուեց երկնից ցասումը. այն վրէժխնդիր կայծակը որ Հայաստանեայ կ'սպառնայ՝ արեան մէջ մարի։.. Բայց դու լսէ իմ վերջին խնդիրս.

ԵՐՈՒԱՆԴ. Խօսէ՛ յայտնէ՛ ինձի.

ՍԱՆԴՈՒԽՏ. Երբոր մեռնիմ ես՝ ո՛վ Երուանդ՝ և սև հագերը զիս ծածկեն, երբ յաղթական դաշտէն դառնաս՝ ոչ դու սգոյ մէջ մի մնար։ Առանձին իմ գերեզմանս եկուր իմ վրաս մտածելու. և վարդերով ու յաղթական դափնիովդ իմ շիրիմս զարդարէ, յիշելով որ ես այդէն երկնային ընտրեալ ոգիներուն մէջ անձկաւ ըզքեզ կ'սպասեմ.

ԵՐՈՒԱՆԴ. Եւ դու կը կարծե՞ս որ ես ապրիմ երբոր զրկուիմ անձկալի տեսութենէդ, երբոր ալ չլսեմ ձայնդ, երբոր աչքերուդ մէջ չիջանին իմ հոգիս մխիթարող ցոլքերը։.. Քու սիրտդ՝ որ այնչափ անգամ բաբախեց ինծի համար՝ ալ պիտի չխնդրէ՞ զիս։ Արդեօք երկնային դաստաններուն մէջ շրթունքներդ ալ պիտի չկրկնե՞ն այն անունը զոր երկրիս վրայ երբեք չէկըմոռնար աղօթքներուդ մէջ։..

ՍԱՆԴՈՒԽՏ. Օ՛հ երբ աշխարհիս կապանքներէն երկնից անմահական վայելքներուն մէջ քեզի պիտի մտածեմ և անթառամ ծաղիկներով երկնից դաշտերուն վրայ քու անունդ պիտի հիւսեմ.

ԵՐՈՒԱՆԴ. Ա՛հ ի՞նչպէս պիտի ճանչնամ զքեզ երկնաւոր դասուներուն մէջ եթէ դու թողլով այս մահացու գեղածիծաղ քօղդ՝ պիտի բարձրանաս՝ ոգի՛ ամբիծ և անարատ՝ լուսոյ դասուները. աւելի սո՞ւրբ պիտի ըլլայ արդեօք հոն քու ժպիտդ թէ՝ աւելի քաղցր պիտի իջնան ողւոյս վրայ քու խօսքերդ։ Ոչ հոն անշուշտ պիտի մոռնաս այս արտասուաց հովիտը, և ալ պիտի չյիշես քու խոստմունքներդ այն օրուան յորում երջանիկ ըրիր զիս քու սէրդ յայտ-

նելով, և թշուառ զինելով զիս անկէ :

ՍԱՆԴՈՒԽՏ. Անելի սուրբ պիտի ըլլայ երկնից մէջ՝ բայց ոչինչ նուաղ եռանդուն մեր սէրը.

ՆՐՈՒԵԱՆԴ. (Զայն Լսելով) կը լսե՞ս այս մարտագոռ աղմուկը .. Հայրենիք զիս 'ի պատերազմ կը հրաւիրեն. կերթամ ահա.. բայց ուրախ ըլլանք՝ արդէն հոգիներս միացած է :

ՍԱՆԴՈՒԽՏ. Ողջամբ դնա (արտասուէ).

ՆՐՈՒԵԱՆԴ. Սանդուխտ՝ դու որ մահուան վտանգներուն մէջէն աներկիւղ անցար՝ դու կ'արտասուե՞ս հիմայ.

ՍԱՆԴՈՒԽՏ. Ողջամբ դնա՝ Նրուանդ. այլ մի փորձեր իմ առաքինութիւնս :

ՆՐՈՒԵԱՆԴ. Յուսա՛, մի այդչափ տրտմիր՝ սիրեցեալդ իմ. եթէ երկնից մէջ գրուած է, որ մեռնիմ՝ մեռնիլ հարկէ ինձ, և ես բնաւ չեմ գանգատիր : Բայց եթէ ճակատագիրս այս չէ՝ մի վախնար. ամէն վտանգի յաղթելով պիտի դառնամ՝ և քու ճակտիդ վրայ պիտի հիւսեմ իմ դափնիներս .... մի լար.. ո՜հ մի՛.. ինծի ալ խնայէ : Անշուշտ Աստուած մը կը գըթայ մեզի ալ. եթէ բոլոր աշխարհս երկուքնուս դէմ զինուի՝ և յաղթէ մեզի, մեր անշունչ դիակները դէրկ ընդ խառն պիտի գտնէ իր փշրած զինուցը տակ :

ՎԵՐՋ. ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾՈՅՆ

# ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՍԱՆԴՈՒԽՏ

(Խորհելով կը քալէ) վերջապէս խաղաղութիւնը տիրեց այս արքունեաց մէջ. բայց այս խաղաղութիւնը՝ աւելի ահաւոր մրրիկներ կ'սպառնայ : Ով դու ես հայրենի ... գթութիւն ... գթութիւն .. եթէ ձեր բարկութեան սուրն էր՝ փշրեցէք զիս .. իմ աւերակներովս գոցեցէք այն անդունդը որ ոտքիս տակ կը բացուի .. ինչո՞ւ կ'ուզէք իմ Սանդուխտս : Երբ աչքըս կենացս ասպարիզին վրայ կը դարձնեմ՝ աւերակ միայն

կը տեսնեմ . . անոնց վրայ ձեր գթութիւնը ծաղիկ մը միայն նետեց՝ իմ աղջիկս . . ինչո՞ւ չէք ուզեր որ գոնէ գերեզմանիս ահարկու սօսափին տակ՝ ինքը արտասուալից հրեշտակի մը նման՝ հսկելով և աղօթելով հաշտեցնէ աստուածները : . . . . . Մի՛ զարհուրեցէք՝ որուն նայուածքը այս ախոյեանս սանձեց, չքանա՞յ քեզի յաւիտենական երջանկութիւնդ, և տարօրինակ հաճոյքի մը համար՝ արտասուք՝ հառաչանք՝ վիշտ յուսահատութիւն տեսնելու՝ բանեղծեցիր թշուառ մահկանացուն որուն չափաւոր միտքը տատանեցաւ վրայ քու հնարքիդ տեսնելով հոն կը դիմէ զքեզ գտնելու . . բայց զարհուրած քու անսահման մեծութենէդ՝ որ երազի մը պէս անդադար իր առջևէն կը հեռանայ՝ փախստական կեանք գերեզմանին մէջ : . . Նայեցէ՛ք . . դու անշուշտ գթած ես . որովհետեւ Աստուած մը զրկերէս յափշտակել կ'ուզէ զՍանդուխտ : Նայեցէք, ո՛հ նա այս՝ այն Աստուծոյն հետ պիտի պսակուելով . . երկուքներս մէկը պիտի յաղթէ . . . և իր կայծակունքը կեռով չափ պիտի այրեն իմ ճակատս մտածմունքները . . . և եթէ պիտի յաղթէ Սանատրուկ, Աստուած մը միայն թող յաղթած ըլլայ իրեն : . .

# ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՍԵՒԵՐԱ ԵՒ ՍԱՆԱՏՐՈՒԿ

ՍԵՒԵՐԱ . Ինչո՞ւ է այսչափ տրտմութիւնդ՝ ով արքայ : Այսպատան քեզմով իր առջև փառքը վերստացած՝ չկրնար ինչպէս փոխարինել . ահու դողի մէջ կան չորս կողմի ազգերը թագաւորական գահէ, ահա քեզի նեցուկէ; և քու շէնքերդ բաւական են իրենց լայն և ամայի աւերակացը մէջ ալ քու անունդ ապագայ դարերուն աւանդել :

ՍԱՆԱՏՐՈՒԿ . Ճաւարշ՞ թիրեա զարմանաս բանծիս՝ այս աշխարհիս վրայ չկայ Սանատրուկին համբաւեան բարձ մը . ի՞նչ է յաղթական վաղերուն զուարթ դոչիւնը . ի՞նչ ընեմ գերի դարձած աշխարհի մը շղթաներուն շառաչիւնը, ի՞նչ քաղցրութիւն ունին փառք, անմահութիւններ չկայ անոնց մէջ Սանդխտոյ՝ իմ սիրելի աղջկանս անուշ ծիծաղը : . . Ա՛հ ի՞նչ կ'ըսեմ . Սան-

դուխտ ա՛լ խմ չէ :..

ՇՈՒՇԱՆ. Երկինք՝ որոնց սիրտդ ու սուրբ նուիրած ես, երկինք՝ որուն պատգամացը հաւատարիմ պաշտօնեան ես, երկինքը՝ որ վարձքը կ'ուշացնէ բայց չմոռնար, երկինք կըսեմ վերջապէս պիտի հատուցանէն արժանի փոխարէն մը։ Մի՛ յուսահատիր. առ քեզ կոչէ զՍանդուխտ. հօր մը ձայնը միշտ սրտին կը՛ դպչի՝ թէպէտ քարացեալ ըլլայ. որչափ աւելի Սանդխտի պէս փափուկ օրիորդի մը՝ որուն շրթունքը ինչուան հիմայ միայն սէր հնչած են։ Ապաստան՝ աղերսէ. մէկզմէկն գերեզմանին պաղ գիրկը՝ մէկալըն հայրական սէրը կենցէ գէր. Երջանկէս ինչ որ սիրտդ կ'ուզէ՝ ըսէ :..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Այո. ողոքեմ աղերսեմ. մոռնամ հայր և թագաւոր ըլլալս. Թերևս Աստուած մը՝ իգութ շարժէ Սանդխտոյ սիրտը իր հօրը վրայ... բայց այս ի՛նչ աղմուկ է :..

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ

ՇՈՒՇԱՆ. Տէր արքայ՝ Ժողովուրդն է որ խուռն բազմութեամբ արքունեաց սրահները կ'ողողէ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Բացուին դռները.

ՇՈՒՇԱՆ. Ի՞նչ կը խնդրէք Հայոց ժողովուրդ

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Արդարութիւն..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Թշուառ հայր..

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Վրէժ.

ՇՈՒՇԱՆ. Յիշեցէք որ ձեր թագաւորին աղջիկն է..

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Արիւն..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ալ բաւական է.. հեռացէք..

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Սկեցն դիք պահանջեն.. մա՛հ ամբարշտին..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ըմբոստներով պիտի դողացնէք Սանատրուկը. հեռացէք.. և թող ձեր անգը խօսի Բրիմակոր.

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Տէր արքայ՝ յարգէ կրօնքը՝ եթէ հայրենիքդ կը սիրես։ (Կ'ելլեն)

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՔՐՄԵՐՆԵՐ ՍԱՆԱՏՐՈՒԿ ԵՒ ՇՈՒՇԱՆ

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Յառաջ մատիր, ծերունի.

ԳՐՈՒՍՊԵՏ. Այս մահացու քողին տակ, որ գլխս կը ծածկէ՝ լսէ՝ թէ ի՛նչ կը հրամայէ քեզի կրօնքը։

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Միշտ մեծարեցի Աստուածները։

ԳՐՈՒՍՊԵՏ. Պարտքդ կատարեցիր. առանց անոնց ի՛նչ ես։

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Պատկառելի լռի անոնց անունը. հիմայ ահարեկ՝ անոնց օգնութիւնը կը խնդրեմ։

ԳՐՈՒՍՊԵՏ. Գիտեսանշուշտ թէ ի՛նչ բանի համար եկայ հոս...

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Իմ աղջիկս...

ԳՐՈՒՍՊԵՏ. Քու Աստուածներդ...

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Աւա՜ղ զանէ ջնջէ իմ սրտէս իր պատկերը...

ԳՐՈՒՍՊԵՏ. Արբայակիղծ է նա...

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Այո յանցաւոր է։

ԳՐՈՒՍՊԵՏ. Դու ինքնին կը դատապարտես զայն...

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Ի՞նչ պէտք որ ընեմ...

ԳՐՈՒՍՊԵՏ. Ինչոր Հայրենիք, ինչ որ Աստուածք կը պահանջեն քեզմէ...

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Խօսէ ուրեմն.. ի՛նչ...

ԳՐՈՒՍՊԵՏ. Սպաննե՛ս զինքը...

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Թշուառ.. Սանատրուկին հետ կը խօսիս...

ԳՐՈՒՍՊԵՏ. Եւ Աստուած մը իմ բերնէս Սանատրուկին կը պատասխանէ. մութ գերեզմանին դատավճիռը ճակատուդ վրայ գրուած է. իր արեամբը միայն կրնաս զայն ջնջել...

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Ահաւոր մրրիկ մը յուզեցաւ սրտիս մէջ.. արդէն սպառնալեց կայծակը իր գլխուն վրայ կ'որոտար... երբոր զինքը ժպտել տեսայ՝ սուրը ձեռքէս ինկաւ՝ և արցունքներ սահեցան աչքէս...

ԳՐՈՒՍՊԵՏ. Նախատէ՛ դիւցազին Հայրերդ. ոտնակոխ ըրէ Աստուածներդ.. և թող որ յաղթական աղջիկ մը անոնց աւերակներուն վրայ կանգնէ խաչելոյն ատելի նշանը...

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Ահաւոր զարհուրելի պատկեր...

ԳՐՈՒՍՊԵՏ. Արիւն չմոռած պէտք է որ Սանդուխտ թողու զաշխարհ...

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Ո՛հ.. այսպիսի զոհ չեն կրնար խնդրել Աստուածք հօրմէ մը...

ԳՐՈՒՍՊԵՏ. Մի՛ ջանար Աստուածոց խորհուրդներուն մէջ թափանցել...

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Իսկ Հայաստա՞նը...

ԳՐՈՒՍՊԵՏ. Օ՛աւի պիտի զարնէ քեզի...

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Աշխա՞րհս...

ԳՐՈՒՍՊԵՏ. Պիտի լռէ...

ՍՈՒՆԵՏՐՈՒՆ. Եւ երբոր Երկինք և երկիր կշտանան աղջկանս արեամբը, ի՞նչ կ'մնայ Սանատրուկոյ...

ԳՐԻՍԱՊԵՏ. Գերեզմա՛ն մը . . արցունքով պիտի բազմի Արդարութիւնը մահուան նոճիներով պսակուած :..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Անողորմ ճակատագիր : . .

ԳՐԻՍԱՊԵՏ. Աշխարհիս օրինակ տալու համար՝ յաճախ Երամազդ իր կայծակները բարձրաբերձ արքունեաց վրայ կ'արձկէ : Արդ ես զքեզ կը թողում .. բայց ոչ եթէ առանձին .. Հետդ է անողոք Խիղճը եւ արիւնաշաղախ Վրէժխնդրութիւնը որ հիմայ բոլոր տիեղերաց մէջէն թռչելով՝ կրկին ձեռքերովը կ'մթնցնէ Երկինքը, եւ կատաղութիւն կ'շնչէ ամէն հայկազն սրտերու մէջ : (Մեկնի)

# ՏԵՍԱՐԱՆ

ՍԱՆԱՏՐՈՒԿ ԵՒ ՍԱՆԴՈՒԽՏ

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ա՞յս վիճակիս մէջ տեսնար պիտի զքեզ հայրդ՝ Սանդուխտ :..

ՍԱՆԴՈՒԽՏ. Հա՛յր աղէտք զիս կը չարչարեն, բայց դեռ չեն ընկճած :..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՛հ մի՛ զարթուցաներ մտացս մէջ յանցանացդ յիշատակը. եթէ անոնց չեմ կրնար ներել՝ գոնէ մոռնամ զանոնք : Տեսա՞ր ինչպիսի վըտանգներ կան մեր չորս կողմը :

ՍԱՆԴՈՒԽՏ. Թէ որ ես զքեզ վտանգի մէջ կը գտնեմ, քու փրկութեանդ համար պատրաստ եմ կեանքս զոհելու.

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՛հ այս Սանդուխտս, կը տեսնեմ որ դու իմ արիւնես դեռ . . . չէ՛ որբ չթողուցին զիս երկինք . . հիմայ թող զան յափշտակելու ինձմէ այս գահը եւ այս պսակը .. լաւ է ինձ քեզմով երջանիկ հայր ըլլալ՝ քան թէ առանց քեզի միահեծան թագաւոր :..

ՍԱՆԴՈՒԽՏ. Միշտ քուկդ իմ ես հա՛յր իմ :..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Բայց ի՞նչ են գաղտնիքներդ .. ինչո՞ւ հօրմէդ կը ծածկուիս : Քանի որ այս նոր աղանդը ճանչցար՝ միշտ տխուր՝ միշտ արտասուաց մէջ ես . . : Ո՞ւր է իմ առջի Սանդուխտս, ո՞ւր է այն անմեղ աղջնակը որ քայլերուս կը հետեւէր եւ որուն միտքը ուրիշ առարկաներ չէր փնտռեր՝ բայց իր հօրը եւ մօրը գիրկը . . . ո՛հ ան անձկալի վայրկեանները ո՞ւր են : Դու կարծես աչքիս զիմացըն է որ պզտիկ էիր եւ գլուխդ ծաղիկներով զարդարուած կ'ա-

ռաշնորդէին զքեզ Երամազդայ մեհեանը ։ Մայրդ՝ որուն երեսը նայելով անմեղութեամբ կը ծիծաղէիր՝ զքեզ այնպէս տեսնելով զմայլած ինքնիրմէ դուրս էր. դու ալ կը հարցնէիր ինծի անոյշ ձայնովդ. "Հայրիկ ո՞ւր պիտի երթանք". երբոր մեհեանը հասանք զքեզ գիրկս առի, և Ով հզօր Երամազդ՝ կ՚ըսէի, որուն վահանը Հայաստանի չորս կողմը տարածուած կը հովանաւորէ զայն, կոյսդ Անահիտ, և դու նազելի Աստղիկ որուն ժպիտը վարդեր կը թափթփէ Հայոց հովիտներուն վրայ. լըսեցէք հօր մը աղաչանացը, պահեցէք իմ աղջիկս, տեսնեմ զինքը մեծցած հասակով և առաքինութեամբ, և օր մը իմ ծերութեանս մխիթարանքն ըլլայ" ։ Իսկ դու զուարթ աչքերըդ մէյմը ինծի մէյմը մօրդ դարձնելով՝ ինչպէս թռչնիկ մը որ նոր ելած ըլլալով իր բոյնէն մէյմը ծննդեան տեղը կը նայի՝ մէյմըն ալ հեռուանց տեսնուած ծաղկափթիթ դաշտերը՝ կարծես կը խոստանայիր ուխտս կատարել ... ահ ան իմ Սանդուխտս հիմայ ո՞ւր է ։

ՍԱՆԴՈՒԽՏ. Հայր իմ՝ անցելոյն քաղցր յիշատակները, հայրական գթութիւնդ, այնպէս սիրտս կը ճմլեն որ կ՚ուզէի (Ձն.) Երկի՛նք մի լսեր ամբարիշտ ուխտիս. (ծածուկ) ոհ կուզէի ճշմարտութիւնը տեսած չըլլալ՝ կոյր մնալ քեզի հաճոյ ըլլալու համար, բայց հիմայ չափազանց լուսաւոր ծագած է մտացս մէջ հաւատոց լոյսը ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՞ր անօրէնը քըզքեզ խաբելով կը յափշտակէ ինծմէ և որը կը թողու զիս աշխարհիս երեսը .. արդեօք կարենա՞մ պիտի գտնել այնչափ դառն մահ մը որչափ դառն է այն հարուածը զոր սրտիս կըջեցնէ ։ Դուստր իմ տես երակներուդ մէջ ի՛նչ արիւն կը վազէ.. անթիւ թագաւորաց արիւնքն է, ամէնքն ալ Երամազդայ հպատակ ։ . . . Աչքդ չորս կողմդ նետէ՝ Աստուածոց կայծակները դեռ կը ծխեն փախըստական թշնամեաց բանակներուն վրայ . . . ամէն տեղ իրենց հետքերը կան.. բայց թէ որ բան մը սիրտըդ չըզգար՝ դէթ հօրըդ խնայէ՝ իմ աղջիկս. բաւական վերքեր ունի իր սիրտը, մի՛ ուզենար քու ձեռքովդ ցաւ մընալ աւելցնել. ահա խուժանն ալ զայրացած զքեզ կը խնդրէ սպաննելու համար . . . ահ գիտես ի՞նչ է հայր մը՝ աղջիկ հայրը ի՞նչ է ։

ՍԱՆԴՈՒԽՏ. Ինչո՞ւ կը փութան Աստուածոց վրէժը լուծել, եթէ իրենք արդարև Աստուած են՝ թող աւերակներուն մէջէն

բարձրացնեն իրենց նախատա-
կած ճակատը, և ես խոնարհիմ
անոնց դիմաց:..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ինչո՞ւ այսչափ
յամառ ես, ի՞նչ կը տեսնես
դուստր իմ՝ այս նոր կրօնքիս
մէջ. ինչու ան հիմայ նոյն փա-
ռօքչէ՞ին ծագեր արեւը և աստ-
ղերը, նոյն զօրութիւնը և ի-
մաստութիւնը չկա՞ր որ զերկինք
և զերկիր կը կառավարէր...
ի՞նչ Աստուած է, այս պաշտա-
ծըդ:..

ՍԱՆԴՈՒԽՏ. Կը պաշտեմ այն
Աստուածը որ զերկինս և զեր-
կիր ստեղծեց, և կը սիրեմ այն
Աստուածը՝ որ մարդկութեան
համար զոհ եղաւ:..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ահա քու հայրդ՝
քու հայրդ իսկ՝ իմ սիրելի Սան-
դուխտս՝ հազար վէրքերով սըր-
տին վրայ, յաղթութիւնները
փառքը առաթուր կոխած, ար-
տասուաց հեղեղներ թափելով՝
ոտքդ կ'իյնայ, քեզմէ կեանք կը
խնդրէ, կը զլանա՞ս իրեն.. առ
ուրեմն այս դաշոյնը որով հայ-
րենեաց թշնամիները ջնջեցի,
առ և ծոցս մխէ. թերևս գե-
րեզմանին խորը ամբարիշտ ձայ-
նըդ ալ չգայ հօրդ յաւիտե-
նական խաղաղութիւնը խռովե-
լու. իսկ եթէ քիչ կ'երևայ քեզի
ունեցած փառքդ՝ զինուիմ ար-
շաւեմ.. իմ սիրելի օրիորդս յաղ-
թական դրօշներուն հովանո-
ցը տակ քնանայ, և հայրենը-
ւանձեալ ազգերու երգերը զին-
քը օրրեն: Յիշէ՛ իմ նազելիս՝
յիշէ՛ որ ես այն եմ որ քեզի
կեանք եմ տուեր. դողդղալով
հսկած եմ քու ամէն մէկ քայ-
լիդ վրայ. առջի ծիծաղդ իմ ե-
րեսս եկած է՝ ես սրբած եմ քու
առջի արցունքդ. և երբոր աշ-
խարհիս մրրկայոյզ ալիքները՝
զէնքերուն շաչիւնը՝ ապագային
տարակոյսները՝ գլխս փշաց զար-
հուրելի անդունդը կը մղէին,
զքեզ իմ գիրկս առած կը սըխ-
մէի և անմեղ ճերմակ ճակտիդ
վրայ նայելով՝ վարդագոյն շըր-
թունքներդ համբուրելով՝ իմ
անձկութիւններս կը մոռնայի,
անապատացած հոգւոյս վրայ
յուսոյ ճառագայթ մը կը ծա-
գէր: Աղջիկս ո՞րը կը թողուս
զիս, գթութեան ձայն մը չը՞-
խօսիր սրտիդ մէջ.. ի՞նչ յան-
ցանք ըրի քեզի... խօսէ...
ի՞նչ կը փնտռես հօրդ՝ կեա՞նք
թէ մահ:..

ՍԱՆԴՈՒԽՏ. Յաւիտենակա՛ն
կեանք:..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ուրեմն կը ժխտե՞ս
(դայրացմամբ) Անիծեա՛լ ըլլան
այն խաբեբայ յոյսերդ, դո՛ւ դո՛ւ-
խնքն որ ալ աղջիկս չես՝ անի-
ծեալ ըլլաս. մթին և յուսահատ
ըլլան քու օրերդ յաւիտեան.
այն տանջանքները որ հօրդ տը-
ւիր՝ այն տանջանքներդ փոա-

յէդ չպակսին ։ Բայց անմահ փայլքներու մէջ ալ ըլլաս, մինչդեռ սիրոյ և մանկութեան զուարթ բաժակը կը քամես՝ հօրդ աճարկու սասերը գըլխուդ վրայ կինէ և թոյն կաթեցընէ բաժակին մէջ ։ . . (Սանդուխտին նայելով) Դու ալ կըշտացիր՝ կշտացիր արեան ծարաւի Աստուած . յուսամ քիչ ատենէն ջնջել հօտքերդ աշխարհիս երեսէն արեան հեղեղներով ։ Ելէ՛ք զէնքի փաղեցէք՝ հզօր Աստուածք Ոլիմպեայ . երկնից լայնածաւալ դաշտերը արեան ասպարէզ դարձուցած՝ կռուի ելէք այս նոր Աստուածոյս դէմ ։ Դողացնէ տիեզերքըս ձեր զարհուրելի խառնուրդը . . . ահագին զէնքերնուդ շողիւնը՝ հազարաւոր երկնքի արեւները մթնցնէ . . . և ահարեկ տիեզերք արձագանգ տան ձեզի . . այս կործանի այդ Աստուածը , և թող իր աւերակացը տակ ճմլէ տիեզերքն ալ զիս ալ՝ որ զուարթ ոգւով այնպիսի աւերակաց տակ կը մեռնիմ ։

ՍԱՆԴՈՒԽՏ . (Մէկ .) Ո՜հ Աստուած իմ . . տկար կոյս մը ձեռքէդ մի ձգեր . . . զարհուրելի բաժակ մը կայ զինմացս . . . ներէ իմ խելացնոր հօրս ։

ՍԱՆԱՏՐՈՒԿ . Ո՛հ , իմ աղջի՛կս էր որ հառաչեց ։ Մեղայ դուստր իմ՝ դեռ քու հայրդ եմ . . . հնազանդէ Աստուածոյ՝ և այն գառն անէծքները որ գլխուդ վրայ կարդացի՝ իմ գլխուս գան բոլորն ալ՝ նայելիս . . ես քու տեղդ մեռնիմ ։ . . . Ահա այն ճակատը՝ այն սիրտը զոր թշնամեաց բանակներ չէին կրցած դողացնել խոնարհեցնել՝ այն ճակատը զինացդ կը խոնարհի ։ Անխռով աչքով Սանատրուկ տեսաւ իր աթոռը սասանեալ, հազար ազգեր իրեն դէմ զինուած . Սանատրուկ անողոք տեսաւ և անխռով էր . լեռնադեղ ալեքները իր սրտին դէմ խորտակեցան , և դո՞ւ իմ օրիորդըս՝ դո՞ւ կուտաս ինծի այն հարուածը զոր թշնամիք չէին կրցած տալ ։ Քու քաղցրիկ մօրդ յիշատակին սիրուն ըլլայ, քու հօրդ մազերուն որ քեզի ու հայրենեաց համար ճերմըկցած են , քու մանկութեանդ սիրուն , այն Աստուծոյն սիրուն ըլլայ դէթ զոր սիրոյ Աստուած կը կոչես , այսպէս անգութ մըլլար . . մի՛ ուզենար պանդուխտ՝ յուսահատ ձգել զիս աշխարհիս երեսը ։ Ահա աչքէդ արցունք կը թափի . . ո՜հ փայլէ՛ սիրտի մէջէն արդեօք յուսոյ ծիածանը՝ թէ տասր մէջ խրդդուին սիրտի սրտիդ փափուկ զգացմունքները . . . խօսէ՛ . . . դարձուր ինծի մէ այն գթածս արտասուօքդ աչքերը որ բաւա-

կան քու հայրդ չիմարկցնել . . . սկսաս քեզի համար կոյր կաղ կ՚ըլլայ . . . խօսէ . . . բայց մտածէ որ այդ խօսքէդ կախուած է հօրդ կեանքը . . . քու կեանքդ :..

ՍԱՆԴՈՒԽՏ. Թէ որ աշխարհահայլին պատճառ մ՚ըլլար զիս դըրդողը՝ քու խօսքերդ բաւական էին զիս ետ կեցնելու . . . բայց Երկինք զիս կը հրաւիրեն. աներկիւղ կը թողում աշխարհ, ցաւով մը միայն հայր իմ՝ որ դեռ ճշմարտութեանլոյսը չըմբռնեցիր :..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ալ բաւական է . . . ով Երկինք մեզի վկայ եղիր, դուստր ընտրէ . (ա—րը և Ն—գը ծնկաչը կը դնէ) : . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Թէ որ այս սուրն է որ իմ եղբարցս ծոցը մտաւ՝ թէ որ այս սուրն է որ վերջ մը տալով թշուառութեանցս՝ Աստուծոյս հետ պիտի միացընէ չէ՞ս՝ սո՛ւրը կ՚ընտրեմ՝ այո՛ սուրը :.. Իջեցո՛ւր հայր՝ այդ մահաբեր հարուածը, վերջին վայրկեանս ալ ցնեմ թէ Սանատրկոյ արժանի դուստր եմ . . . Օ՜հ բայց մի մոռնար որ քու աչքիկդ վարդագոյն արեանցը մէջ՝ իր ծիծաղը խառնեց . վա՛րդ՝ և ինչ որ արցունքս չէ կրցած սորվեցնել՝ արիւնս սորվեցնէ, և այն նուիրական լուծին պատկառանքը՝ այն խաւարեալ յոյսերէս որ գերեզմանիս վրայ պիտի թօշնին, անոնք հայր՝ անոնք թերևս սիրոյդ մեղմացնեն : Օ՜հ և թող զիս այն կործանեալ տաճարաց շուքին տակ, իմ Քրիստոնեայ եղբարցս քով : . .

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Հնազանդէ ինծի. իբրև թագաւոր իբրև հայր կը հրամայեմ քեզի : . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Ո՛հ սիրով կը սիրեմ զքեզ, բայց իմ Աստուածս քեզմէ ալ աւելի կը սիրեմ : Ա՛ւ ոչինչ կը դրեմ ամէն մարդկային պատկառանք, ապա կը համարիմ անձս ամէն կապերէ, ա՛լ զքեզ հայր չեմ ճանչնար՝ եթէ քրիստոնեայ չես : . .

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ով զայրոյթ, ով յանդգնութիւն . . . պաշտէ՛ Աստուածները՝ կամ մեռիր :..

ՍԱՆԴՈՒԽՏ. Քրիստոնեայ եմ.

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ինչո՞ւ կ՚ուշանան երկնից կայծակները այս ամպարիշտը կարկեցնելու . . . պաշտէ Աստուածները :..

ՍԱՆԴՈՒԽՏ. Քրիստոնեայ եմ :

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Փութա ուրեմն արիւնաշաղախ սեղանը . զքեզ զոհ կ՚ընեմ Աստուածոցս . ահա քու մահուանդ վճիռը :..

ՍԱՆԴՈՒԽՏ. Չեմ դողար : . .

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Այո՛, պիտի դողաս՝ բայց շատ ուշ, երբ շողալ տեսնես գլխուդ վրայ քու արեանդ ծարաւի սուրերը : . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Աստուած մը իմ հետս է:..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Տեսնենք եթէ այդ Աստուածը պիտի կարենայ փրկել զքեզ իմ ձեռքէս: Ոչ պիտի չկրծանիք՝ ո՛վ դիք՝ ցորչափ կենդանի է Սանատրուկ՝ ցորչափ սուրը իր ձեռքին մէջ փշրուած չէ: (Մեկնի.)

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՍԱՆԴՈՒԽՏ ԵՒ ԽՈՒ (Պահակէն)

(Սանդուխտ շղթայակապ բերած կը ներսէ)

ԴԱՀԻՃ. Այս՝ մեր տէրը՝ Սանատրուկ թագաւորը՝ կը հրամայէ որ մեկնի թողուս այս շքեղ պարգևը՝ որ Աստուծոյ Թագուհւոյն կը վայելէ և ոչ թէ քրիստոնեայ մահապարտի մը:.

ՍԱՆԴՈՒԽՏ. Իմ հօրս և թագաւորիս հրամանները կատարուին :..

## ՏԵՍԱՐԱՆ Է.

ՍՈՅՆՔ ԵՒ ԸՆԿԵՐԸ

ԸՆԿԵՐԸ. Ներեցէք դշխոյ այսպէս յանկարծ ներս մտնելով ձեր խորհուրդները պղտորելուս, աղէտալի դէպք մը ունիմ զոր չեմ կրնար ուշացնել :..

ՍԱՆԴՈՒԽՏ. Ի՞նչ է:..

ԸՆԿԵՐԸ. Ձեր անձնուէր բանակը Երուանդ . . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Ոհ տէր, ի՞նչ կայ Երուանդին վրայ՝ շուտ ըսէ:..

ԸՆԿԵՐԸ. Երուանդ զարհուրելի արիւնահեղ պատերազմի մը մէջ քաջութեամբ պատերազմելով...

ՍԱՆԴՈՒԽՏ. Ոհ պատմէ՛ ի՞նչ եղաւ.. խօսէ:..

ԸՆԿԵՐԸ. Երկնայ հզօր բանակը երբոր հալածուոր փախչելով պատերազմի հրաւէրը առաւ՝ և հրեղէն ծովերու մէջ երկաթազէն դուռները կը շարժէին, Աստուծոյ անմեհեր բանակն ալ սկսաւ յառաջ երթալ: Արդէն օդին մէջ յաղթութեան հրաւէր տալով դրօշները կը ծփան, արդէն բանակ բանակի մօտ է, և մահը հալածուոր կարծանէր կը հնձէ,

Երբոր Աւանոց ձախ թեւը նա քաշուելով՝ քաջալերուեցաւ. Հայոց աջ թեւերէն ինկած ահագին ջարդ մը տալ : .. Բայց պարհուրելի տեսարան՝ անոնք դարան : լարեր և Հայերը խաբելով հոն սրսացեր են : Հոն ահաւոր արիւնահեղութիւն մը Հայոց և Աւանաց մէջ . բոլոր պատերազմի դաշտի վրայ բանակները իրար անցեր են՝ ինչպէս փոթորկայոյզ ծովերնեղուցի մը մէջ . սուրերը կը շողան խիտ առ խիտ գունդերուն մէջէն՝ ինչպէս տիրկածեր ամպոց մէջէն փայլակը . արեան սեւ հեղեղներ կը թաւալին , գլորուելով ունայն սաղաւարտներ և վրահներ որ իրենց քաջ տերանց լանջքը 'ի զուր կը պահպանէին հայ նիզակաց դէմ : Ամենուն աչքէն կրակ կը թափթփի՝ ամենուն ձեռքէն մահ . յաղթութիւնը տարակուսեալ թեւերով երկու բանակներուն մէջ կը թաչափ : Այս խառնուրդին մէջ ահա Ներսանդ իր հեծելազոր գնդաւը կը յարձակի : Յաղթութիւնը զուարթերես՝ իր հողմածուփ դրօշերուն վրայ կը նստէր : Զինուորաց և հետեւակաց գունդերուն մէջէն արիւնոտ ճամբայ մը կը բանայ իրեն . հազարաւոր սլաքներ իր չորս կողմը կուլին կը սահլին , բայց կարծես չեն համարձակիր իր սիրտը մտնելու , կամ թէ անծանօթ ձեռք մը զանոնք կը հեռացնէ . իր երիվարը խըրխնջելով կը կոխկռտէ բիւրաւոր դիւցազանց մարմինը որ քիչ մը առաջ գերութիւն և մահ կ'սպառնային : Թշնամեաց մէջ խռովութիւնը կը տիրէ , լայնածաւալ դաշտերը նեղ կերեւան փախչողներուն , Հայերը կը քաջալերուին . . . այլ հոն թշնամեաց դիականցը վրայ՝ պատառատեալ և արիւնոտ դրօշներուն մէջ՝ սուրը ձեռքը փըշրած՝ իր վահանին վրայ Հայոց դիւցազնը կ'իյնայ : . .

ՍԱՆԴՈՒԽՏ . Ոհ . . .

ՇՈՒՇԱՆ . Դժա՛ռն յաղթութիւն զոր Հայերը դիւցազնի մը գնով գնեցին . . . Արդ գիս որ իր քաջութեանցը վկայ եղայ՝ կը խաւրէ առ քեզ իր յետին ողջոյնը մատուցանելու , և կ'աղաչէ որ չմոռնաս զինքը . . . Ա՜յ՛ ո՛վ դէք՝ կը ցնորի կոյսը . բարեկամ օգնէ իրեն .

ՍԱՆԴՈՒԽՏ . (Անկարգ ցնորած) Ո՞ւր եմ . . . ո՞ւր եմ . . . թողէք զիս . . . ո՞րն է այս արիւնաշաղախ դաշտը . . . անուն մը կը մրմնջեն այդ շրթունքը . . . այդ նուաղեալ աչքերը մէկը կը փնտռեն . . . Ներսանդըն է ինքը . . Ներսանդն է

. . . զէնքեր բերէք ինծի . . զինուիմ . . երթա՛մ այն դաշտը . . մինակն է Երուանդ : . .

ՇԱՒԱՐՇ. Անխիթարուէ՛ կոյս. անօգուտ են արտասուք որ գերեզմանի մը անզգայ քարին վրայ կը կաթին : . .

ՍԱՆԴՈՒԽՏ. (Ինքնիրեն) Թող փութա Հայաստան իր աղազատարարին շիրիմն ողջունելու. ես ապաշնորհ, ես քու մահուանդ պատճառ՝ հեռու պիտի կենամ : . . Ո՛հ թէ որ ես հետդ գայի՝ և քեզի ուղղուած հարուած մը գլխս քու ոտքդ նետէր : . . Բայց զքեզ մոռնա՞լ, զքե՞զ . . ոչ երբ արտասուք ջնջեն սրտէս ամենէն քաղցր յիշատակները, քու անունդ անջինջ պիտի մնայ : . .

ՇԱՒԱՐՇ. Վերքերդ մի՛ նորոգեր բամբիշ. վաղ կամ անագան կ՚անցնին վիշտք : . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Ա՛յր . . ոչ կանչեցէք մայրս . . . պատմեցէք իրեն իմ անձկութիւններս . . իր համբուրիցը անձկակարօտ շրթունքս կը տոչորին . . . Ահա գարնանալայր հեղեղի պէս վրաս կը յարձակի մոլեգին ամբոխը . . . ո՞ւր փախչիմ . . ո՛հ մայր քու գերեզմանդ կ՚ապաւինիմ : . .

ՇԱՒԱՐՇ. Փրթա՛ երկնային կոյս՝ գթա երիտասարդութեանդ . . ՚ի գութ կը շարժին վրադ անշուշտ երկինք : . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Բոց մը կը բորբոքէ գլխս . . ծարաւը շրթունքս կը հիւծէ . . Շաւարշանայ դաշտը վազեցէք . . հոն խոր անձաւի մը մէջէն զով և յստակ աղբերներ կը բղխին . . բերէք ինծ : . . Հոն իմ կուսուհի ընկերքս՝ քնարներու դիւթիչ ձայնովը կը պարեն . . ըսէք անոնց որ ծաղկեայ պսակներ հիւսեն ինծ . . . սիրոյ զոհ մըն եմ . . . ծաղիկնե՛ր սփռեցէք գլխուս վրայ . . . ծաղիկնե՛ր սփռեցէք գերեզմանիս վրայ : . .

ԴԱՀԻՃ. Ո՛հ թշուառ կոյս : . .

ՇԱՒԱՐՇ. Երջանկութիւնը կըսպասէ քեզի՝ մի վախնար նազելի Սանդուխտ : . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Տեսէ՛ք, տեսէք սա խաւարամած բանտերը որ աչքիս դիմաց կը բացուին . . տեսէ՛ք ի՜նչ տխուր լոյս կ՚արձկէ անոնց վրայ դահճին ջահը . . լսեցէ՛ք շղթաներուն շառաչիւնը . . տեսէ՛ք Մահը սոսկալի գայլի մը պէս վրաս կը յարձակի : . . Բարեա՛ւ երթայք մանկական յոյսք . . . բարեաւ երթ յուսածիծաղ հասակ : . . Բայց աւա՜ղ ես կըցնորիմ . . . ոչ ոք անսայ ինծ . . մթին ամպոց մէջ մոլորած տատրակի նրման՝ ցաւոց մէջ կը կորսուի հո-

դիս : Ինչո՞ւ կ՚ուշանաք՝ տարէք զիս այդ նսեմ բանտը . . . այլ ինքզինքս պաշտպանել չեմ կըր-նար : .

ՎԵՐՋ ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾՈՅՆ

# ԱՐԱՐՈՒԱԾ Ե.

## ԲԱՆՏ

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՄԱՆՓՈՒԻՏ

(Շղթաներուս մէջ պառկած ամէն բանտերէն, կարը լուսաւոր ամ-պէ մը մէջէն ծօրն արտաւէրը կ՚երեւայ :)

(Իւրին ընէ երկայն տեւելով.) Ով անձկալի ծոց . . . ով իմ մանկութեանս գեղեցիկ օրօրոցը . . . գէթ իմ ծոցս կ՚գրկեմ . . և երջանիկ եմ . . . սակայն դու լռես՝ դո՛ւ որ չէիր կրնար աղջիկդ տեսնել առանց սիրոյ խօսք մ՚ընելու . . բայց աչքեդ արցունք մը կ՚կաթի . . . մա՛յր իմ՝ փարատէ տրտմութիւնդ . . ահա իրարու գիրկն ենք : . Վերջին անգամ մ՚այլ երկրիս վրայ միատեղ լալու հաճոյքը վայելենք :. . . (Մրափէ.) Ո՜հ . . . երա՞զ էր . . . այս ինչ մութ . . ինչ ահաւոր տեղ է . . մարմինս կ՚դողայ : . . Քո՛ւ նանուշակ ինջիր արտեւանանցս վրայ . . խաբէ իմ ցաւերս հեշտ երազներով : . . Թշուառի մը համար մոռացութենէն քաղցր ի՞նչ կայ . . . (շղթաները կը շարժին :) Ինչ տխուր ձայն կ՚ընեն այս խոր կամարները . . . արդեօք մթութեան մէջ թափառող ստուերներն են որ զիս կ՚ողբան : . . Թողուցէք զիս՝ թողուցէք զի՛ս ո՛հ գթացէք ինծի . . . ես անմեղ եմ : . . Եկուր ուրեմն՝ ով մահ եկուր այլ տանջանքներս մ՚երկ՚ընցըներ . . այն ծաղիկները զոր սէրը պիտի քաղէր՝ դու զանոնք ժողվէ և անոնցմով քու տխուր սափորդ զարդարէ : . . Անձկալի լոյս արեւու զոր աչքերս ընդունայն տեղ կ՚բնտռեն՝

բարեւ՚ է մնա . . ես կ՚մեռնիմ ահա . . . եւ ոչ ոք կ՚հոգայ զիս . . (կ՚իյնայ նուաղելով.)

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՆՈՅՆ ԵՒ ԵՐՈՒԱՆԴ (վերջերը կեցած)

ԵՐՈՒԱՆԴ. (Առանձինն.) Մարգախանձ դաշտին վրայէն՝ գեւ փառաց արփենագանգ մրահնին ճակատս՝ ո՜ր զօրութիւնը զիս մահուան ցրտասարսուռ դրկերէն յափշտակելով՝ հոս կառաջնորդէ։ . . . Մէր՝ կոյր առաջնորդ եմ քայլերուս՝ քուխաբերայ երազներուդ մէջէն եմ դարձեալ՝ թէ ճշմարիտ Սանդուխտն է տեսածս։ Շղթաները իրեն բարձ առած՝ այս ահաւոր բանտիս մէջ անխռով կ՚ննջէ՝ այս՝ մարդկային վշտերը մխիթարելու խաւրուած հրեշտակը՝ ինչպէս աստղի մը լոյսը գերեզմանին վրայ։ Ժպիտը բոլորովին թոռմած չէ իր շրթանց վրա եւ գժգոյն է իր ճակատը՝ թեթեւ ամպի տակ ծածկուած լուսնի նման։ Անդհատ է իր շունչը՝ ինչպէս կէս գիշերուան հովը՝ որ կ՚շնչէ եւ կ՚դադրի։ (Սանդուխտին զմայլմամբ նայելով.) Ո՛հ հրեշտակ մ՚ըլլայի թեթեւ թեւերով այն հոգւոյն մէջ իջնալով՝ վէրքերը բժշկելու։ Ո՛վ դիւաէ՝ սիրոյ երազոց մէջ սաւառնելով հիմայ՝ կ՚յիշէ թերեւս այն երջանիկ վայրկեանները՝ որ առանձին դիմացէ դիմաց նստած՝ մոռնալով բոլոր աշխարհս՝ խրախուս նայուածքներուն մէջ կ՚ապրէինք։ Շրթունքնիս չէին համարձակեր մեր հոգւոյն գաղտնիքները յայտնել, բայց փափուկ թիթ ժպիտ մը՝ հեղձամղձուկ հառաչանք մը միայն՝ մեր կաթողին ըղձերը կ՚մատնէին, ինչպէս երկու երկնաւոր էակներ որ դէմ առ դէմ կեցած լուռ՝ մահկանացուաց ականջը չհասկցող ներդաշնակութեամբ կ՚խօսին։ . .

ՍԱՆԴՈՒԽՏ. (Քնոյն մէջ.) Գըթութիւն . . . ո՜հ Տէր . . գըթութիւն։ . .

ԵՐՈՒԱՆԴ. (Զմայլմամբ.) Անմահից պսակներէն փրցուած ծաղիկ՝ ո՞վ զքեզ դատապարտեց այս տխուր հովտիս մէջ թոռմելու։ . .

ՍԱՆԴՈՒԽՏ. (Արթննալով) Հրեշտա՛կ գթութեան իջա՞ր ուրեմն թշուառի մը արցունքները սրբելու։ . .

ԵՐՈՒԱՆԴ. Մ՚ի ցնորիր՝ Սանդուխտ. անսով է: . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Երուանդ . . ոհ քու անգութ գերեզմանիս տխուր ճամբուն վրայ մխիթարութեան նշոյլ մը կ՚արձկէ: . .

ԵՐՈՒԱՆԴ. Գերեզմանի՞դ: . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Այո, տեսնե՞ս այս շղթաները: . .

ԵՐՈՒԱՆԴ. Թող տուր ինձ համբուրել զանոնք: . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Այո տեսնե՞ս այս խաւարամած բանտը: . .

ԵՐՈՒԱՆԴ. Դու հոն ես Սանդուխտ՝ ինծի համար արքայութիւն է: . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Ահա ինչ որ մնաց ինծի: . .

ԵՐՈՒԱՆԴ. Ցորչափ ապրի Երուանդ՝ մի վախնար. եթէ սուրը խորտակի ձեռքին մէջ՝ իր վէրաւոր մարմինը քեզի վահան կըլլայ: . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Երուանդ՝ այս դժբաղդ ժամուս մէջ յորում երկիրս ինծի նահատակութեան ասպարէզ մը դարձած է՝ և երկինք հանդիսադիր են, ինչո՞ւ խաղաղութիւնս պղտորել կ՚ուզես. երբեք քրիստոնեայ նկատէ զիս հիմայ. մոռցիր ալ տկար կոյսը: . .

ԵՐՈՒԱՆԴ. ([illegible]) Օ՜, քեզ մոռնա՞լ . . . ոհ ոչ մեռնիլ: . . Այո տեսնե՞ս այս վէրքերը, ([illegible])

ՍԱՆԴՈՒԽՏ. Երկի՞նք: . .

ԵՐՈՒԱՆԴ. Մ՚ի զարհուրիր. քեզի համար առի զանոնք: . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Ու եկա՞ր: . .

ԵՐՈՒԱՆԴ. Օ՜, քեզ փրկելու: . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Այթէ անհնար է: . .

ԵՐՈՒԱՆԴ. Մեռնելո՞ւ: . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Ու ի՞նչպէս պիտի ազատես զիս: . .

ԵՐՈՒԱՆԴ. Հօրդ մեղքը ամոքելով: . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Ընդունա՜յն ջանք: . .

ԵՐՈՒԱՆԴ. Մէկ հրամանիս կրապանն բոլոր հայոց դունդերը, արեան հեղեղներով մահուանդ՝ դատակնիքը պիտի ջնջեմ. ([illegible])

ՍԱՆԴՈՒԽՏ. ([illegible]) Ահ քու սիրուդ ըլլայ Երուանդ, քու ամէնէն սիրելույդ գլխուն՝ վերջին ձայնս մտիկ ըրէ՝ խաղաղութեան Աստուած մնէ այն որուն համար կը մեռնիմ, և ուրիշ կերպով չսանձեր իր թշնամեաց սրոյն կատաղութիւնը՝ բայց հեզութեամբ պարանոցը անոր ընծայելով: Բայց թէ որ աղաչանքս ընդունայն է՝ թէ որ կատարես զիս՝ այն անօրէն սուրը որ հօրս դէմ պիտի բարձրացընես՝ նախ իմ ծոցս մղէ. . իմ արեանս մէջ հօրս կատաղութիւնն ալ՝ քու աներութիւնդ ալ շիջանին: . .

ԵՐՈՒԱՆԴ. Երբոր անհրաժեշտ է զոհը՝ երբոր արիւն կ՚ինդրէ

այդ Աստուածը, թող ես եր-
թամ ուրեմն այն սեղանին՝ վը-
րայ քու տեղդ զոհուելու :..

ՍԸՆԴՈՒԻՏ. Ո՛հ ապրէ. ես՝ որ-
կոր կոյս՝ ուրիշ բան չեմ կըր-
նար տանիլ խաչին ոտքը, բայց
արցունք մը և արեանս կաթիլ-
ները. դու փառաց ասպարեզին
մէջ քաղէ քեզի պատրաստուած
մրցանակները՝ և եկուր այն խա-
չին ոտքը նստելու, ապրէ՝ և ե-
թէ յիշես զիս՝ շիրմիս վրայ ե-
կուր ինծի մտածելու :..

ՆՐՈՒԻՆԴ. Ուրեմն զիս կ'թո-
ղու՞ս :..

ՍԸՆԴՈՒԻՏ. Յաւիտեան երկ-
նից մէջ միանալու համար. հոն
կ'կոչէ զիս Աստուած :..

ՆՐՈՒԻՆԴ. Օ՜ քեզ տեսնելով
կ'ուզեմ հաւատալ թէ Աս-
տուած մը կայ՝ բայց հաւատալով
այն Աստուծոյն զոր ձայնդ ին-
ծի կ'սորվեցնէ՝ ո՛հ մի խաբուիր՝
քեզի է որ կ'հաւատամ ... և ե-
թէ խորտակէ 'ի քեզ իր ամե-
նէն զգալի պատկերը՝ եթէ քու
ժպիտդ թոռմելով՝ ամայանայ
ինձ՝ աշխարհ, է՛հ պէտք ըսեմ
ան ատեն թէ աս աշխարհս դիպ-
ուածոյ ծնունդ է՝ և թէ թշուա-
ռութիւնը՝ իր երկաթեայ գա-
ւազանովը կ'վարէ զանիկերս :..
Ան ատեն պիտի մտնեմ մահուան
ստուերներուն մէջ հարցնելու
թէ ով է ստեղծեր զմարդ և
ինչո՞ւ այսչափ թշուառ. թէ ին-
չո՞ւ Ինքը որ կրնար երջանկու-
թիւն բաշխել՝ մահ և աղէտք
սփռեր է մարդուս ճամբուն վը-
րայ :.. Բայց եթէ սիրոյ էակ
մը կայ հոն, ո՛հ ան ատեն վրէժ-
խնդրութիւն պիտի կարդամ
աշխարհիս վրայ ... անէծք և
վրէժ քու վրադ ալ :..

ՍԸՆԴՈՒԻՏ. Անիծէ՜ զիս ...
բայց ճանչցիր զինքը :..

ՆՐՈՒԻՆԴ. (Արտաքելով.) Ո՛հ...
ի՞նչ ըսի .. թշուառ .. իմ վրաս
իյնան անէծք՝ իմ վրաս փշրին
քեզի սպառնացող կայծակունք
.. թո՛ղ ինձ միայն որ դէթ իբ-
րև եղբայր քու ետևէդ գամ
... Մէկ սեղանի վրայ՝ երկու
ողջակէզ զոհուինք ... Ան
ատեն՝ թէ և յաւիտենականու-
թիւնը՝ մութ և անեզր անապատ
մ'ըլլայ, թէ և անգութ Աս-
տուածք հոն տիրեն՝ կ'գթան ան-
շուշտ մեզի՝ քու անմեղ ճակ-
տիդ վրայ արեան բիծը նշմա-
րելով :.: Թող՝ հիմայ աղէ
քու շղթաներդ :..

ՍԸՆԴՈՒԻՏ. Սիրոյ համար թե-
թև են շղթայք :..

ՆՐՈՒԻՆԴ. Բա՞ղցր է քեզի վա-
տահամբաւ մահ մը :..

ՍԸՆԴՈՒԻՏ. Վատահամբաւ չէ
Աստուծոյ համար մեռնիլ՝:

ՆՐՈՒԻՆԴ. Եւ մինչև ցե՞րբ պի-
տի յամառիս :..

ՍԸՆԴՈՒԻՏ. Մինչև որ ճշմար-
տութիւն ըմբռնես :

ԵՐՈՒԱՆԴ. Խաբեպատի՛ր ցնորք:

ՍԱՆԴՈՒԽՏ. Երկնայի՛ն ճշմարտութիւնք:..

ԵՐՈՒԱՆԴ. 'Ի Սէր այն սուրբ հանգուցին որ կ՚կապէ զմեզ՝ մի՛ թողուր զիս:..

ՍԱՆԴՈՒԽՏ. 'Ի սէր երկնից հետըս եկուր:..

ԵՐՈՒԱՆԴ. Կ՚ուզե՞ս ուրեմն որ սուրս իմ կենացս վերջ մը տայ:..

ՍԱՆԴՈՒԽՏ. Մ՚էկտեղ մեռնինք՝ և մէկտեղ ապրինք յաւիտեան..

ԵՐՈՒԱՆԴ. Ո՛հ դու երբէք չսիրեցիր զիս անողորմ . . . և ես ինքզինքս մահուան ճիրաններէն յափշտակելով եկայ մինչև հոս..(Զօրականաց.) Առէք՝ մահուան դաշտը տարէք զիս.՚. հոն մեռնիմ.. առանձին:..

ՍԱՆԴՈՒԽՏ. Ո՛հ.. որչափ կը ծանրացրնես ինծի այս յետին հարուածը:..

ԵՐՈՒԱՆԴ. Ո՛վ քաջ նիզակակիցք իմ... տարէ՛ք զիս... ահա կ՚նուաղիմ:..

ՍԱՆԴՈՒԽՏ. Կեցի՛ր.. ըսէ ինծի՝ ինչ կ՚բաղձաս:..

ԵՐՈՒԱՆԴ. Ահաւոր անդունդ մը զմեզ իրարմէ կ՚բաժնէ.. յաւիտենականութիւնը... (Զօրականք տանին զԵրուանդ.)

ՍԱՆԴՈՒԽՏ. (Երթանացելով հայի ընդ երկինս.) .. Ո՛հ երկի՛նք՝ գթութի՛ւն.. ալ բաւական է:.. (Ճչէ.)

# ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԹԱԴԷՈՍ ԵՒ ԽՈՒՄԲ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ՈՐ Ի ՄԱՀ ԵՐԹԱՆ

Ս ԹԱԴԷՈՍ. Առաքինի նահատակք՝ անվեհեր յառաջ մատիք . . . տեսէք այն աստղահիւս պսակները որ երկրիս թանձրամած ստուերներուն վերայ կ՚շողան.. թող լինայ աչքերնէդ մահացու քօղը՝ և տեսէք թէ որպիսի անձկաւ հրեշտակք՝ ընկերք ձեր՝ դրկաբաց կ՚սպասեն ձեզ յերկինս: Զուարթ երգերով ողջունեցէք զանոնք:..

(Ոմն 'ի պարուէ՝ յառաջ մատուցեալ՝ ասէ.)

Երբ փշրի քնար 'ի ձեռս մատաղ քերթողի
Հեշտ ես հնչէ իր յետին ձայնն օդոց մէջ.
Արևն 'ի մուտս 'ի ծայր լերանց երբ ժպտի
Իրեն ժըպիտն աւելի քաղցր է և պերճ.
Եւ ինչո՞ւ մեր սիրտք՝ երբ մահուան դռնէն
Յաղթութեան դիմեմք՝ պիտի չնուագեն:

Պար.

Երգեսցուք Տեառըն զօրութեանց
Որ ըղըանակըս խորտակէ.
Եւ ընդ հրեղէն դասուն նուագաց՝
Ձայն մեր յաղթու նորա ելցէ։

Ձայն մը.

Ապառաժէնք և կատարշաւ գիւցազունք՝
Զերդ հրաբորբոք անտառ շարժեալ 'ի հողմոց,
Մեռներ դաշտեր ըսպառնալով ծածկեցին.
Անոնց ցասման՝ աշխարհ.քներ քիչ կ'թուէին.
Բայց Դու՛ նայեցար . . . և անոնք սուզան
Ի՛ վիհս որ իրենց ներքև բացուեցան։

Ուրիշ ձայն մը.

Ելաւ հըզօրն՝ և իր հուժկու թևերով՝
Խըլեց քանդեց տէրութիւններն 'ի հիմանց.
Լռեց առջեն երկիր . . . և ինք միայնակ՝
Աւերից վրայ կանգնեց զիւր գահ խրոխտապանծ.
Ճակատ երկնամէտ վերցուց Քեզի դէմ . .
Քու կայծակդ ինկաւ . . . փշրեցաւ անդէն։

Պար.

Հզօր Աստուած դու զօրութեանց՝
Ո՛վ քեզի հետ կ'բաղդատուի.
Առջևդ՝ ոչինչ են տիեզերք.
Ոչինչ է քեզի տիեզերք լի։

Երրորդ Ձայն մը.

Հայեցաւ խորախոն 'ի կորակոր այս երկիր.
Արենակաթ սուրն երկնից դէմ շողացուց՝
Եւ գոչեց, "Ո՛վ իմ ճակատուս մրտեննեք
Կրնայ իր դլուխը պսակել. ո՞ր Աստուած
Կրնայ խորտակել սուրն իմ ձեռքիս մէջ
Կամ յափշտակել զաշխարհ ձիրանէս։"

"Հայու լերանց վրայ ծըփան իմ դրօշերս.
Կարմրցան ջուրք գետոց արեամբ թշնամեացս.

Գիշերայն՝ բոցք աստուշանացն օդասլաց՝
Հրեղէն պալատս կանգնեն ամպովք երկնամած.
Եփրատէն գանգէս՝ 'ի լուր իմ անուան՝
Զարհուրած ալիք՝ արձագանք կուտան:" . . .

Զօրաւոր Ձայն մը.

Եւ հիմայ զմեզ՝ իբր ողջակէզ անմռունչ
Իր անողորմ սրոյն ճարակ կ՛մատնէ : . .
Արդարութիւն չենք խնդրեր՝ Տէր, այլ միայն
Մեր արեանց վրայ զղջման արցունք մը թափէ : . .
Եւ մեր շիրմաց քով թող վարդեր ծըլին
Որով քու անմահ տաճարք զարդարուին :

(Մինչդեռ կ՛հեռանան՝ ներսէն տխուր ձայնով հետեւեալ երգը երգելով՝ Սանդուխտ պատասուալից կ՛երեւայ՝ և մօտիկ կ՛ընէ.)

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՍԱՆԴՈՒԽՏ ԵՒ ՊԱՐ (որ կ՚երգէ ներսէն տխուր եղանակաւ)

Ո՛վ անցաւոր վայելք և փառք
Ո՞ւր վերջանայք . . . 'ի գամբան . .
Եւ որ ի ձեզ յենու զուարթ
Ըռեալ գլորէք 'ի վիհն այն : . .

Ո՞ արբուցէ զպասքեալս հոգի
Ո՞ զխռովութիւնս հաշտեսցէ.
Եւ ո՞ զծնդեալ ծաղիկ որտիս
Ի ցօղ զուարթ արբուսցէ :

Եկ ո՛հ եկ խաչդ յաւիտենից՝
Որ տարածեալ ըզբազուկ
Եւ ընդ անմահ քով հովանեաւ
Հանգիստ ննջեն մահացուք :

Ծառաստանէ հողոյս իջցէ
Ցօղ կենսատուքս արեան,
Որպէս 'ի վարդ արեւակէզ
Արտօսր այգուն շայեկան :

Մինչ ըզմահուան գառն բաժակ՝

Ի ձեռս առեալ կամ յլմպեղ
Տուր մոռանալ զանձն իմ խորտ ,
Տուր ինձ զմահ քո յիշել։

Մինչ առաւօտուր կոխեմ ոտից
Ըզմանկութեան փարթո՝ ըղձագ՝
Եւ ըզզլխուխ ըսպառնալից
Զինչ մերկացեալ կայ փաղակ ,

Ներեա՛ սրտոյն որ զիս հարցէ ,
Դիր ցօղ մի՛ լոկ յաչս դաշձաց . . .
Ներեա՛ նոցա՝ զիս զօրացն՝
Վանել զերկիւղ մահապգեաց : . .

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԹԱԴԷՈՍ ԵՒ ՍԱՆԴՈՒԽՏ

ԹԱԴԷՈՍ . Կուլա՞ս՝ կոյս դու . չէի կարծեր որ այսպիսի փոխմ ժամու մէջ զուլայ Քրիստոնեայ մը : . .

ՍԱՆԴՈՒԽՏ . Յօժար է հոգիս՝ բայց մարմինս տկար : . .

ԹԱԴԷՈՍ . Քաջալերուէ՛ բամբիշդ ․․այոյ . նուիրէ Աստուծոյ կուսութեան առջի շուշանը փառադոյն արեամբ կարմրած : . .

ՍԱՆԴՈՒԽՏ . Քաղցր է այն ձայնը որ զիս կ՚մխիթարէ . բայց ո՜հ Ո՞րբ ոսկոյ դաշտին միրիկները . . . երբ իմ , ալեծուփ նաւակիս խաղաղութեան նաւահանգիստը ոսկոյ հանդի : . .

ԹԱԴԷՈՍ . Տե՛ս ով կոյս անփորձ՝ տես այս ալեզարդ ծախասս , կ՚ձանձնամ պաշխարհ . . . իրեն բոլոր ծաղկափթիթ դաշտերէն անցայ . . բայց ուր որ ուզեցի քննել՝ ոտքիս տակ թշուառութեան ահագին անդունդը բացուած տեսայ ։ Ընթացայ ընդ երկար իր ուրուականներուն ետեւէն որոնց ձախողին վրայ յոյսը կը ժպտէր , որոնց հետքերը ծաղկունք կը ծլէին . . բայց աւա՜ղ . . անոնք ամպի պէս փարատեցան : . և տեսայ որ ոտքիս տակ . . գերեզման մը կայ ։ Ո՜հ ինչ է կեանքը . . մանկութիւն երիտասարդութիւն այրութիւն ծերութիւն . . . ժպիտ մը՝ անցուկ մը՝ կսկիծ մը և յիշատակ մը : . .

ՍԱՆԴՈՒԽՏ . Մաղանցուկ է աշխարհ՝ բայց անցած ժամանակը հրեղէն հետքեր կը թողու սրտին մէջ : . .

ԹԱԴԷՈՍ . Յիշէ այն ժամը յու-

բում Աստուած մը ինքնին լքեալ և անոք կը տառապէր. ոլոռն ոլոռն արիւնը կը հոսէր իր ճակտէն. իր հառաչանքները կը կորսուէին յուսահատութեան անդնդին մէջ: Աստուած մը տիեղերաց մէջ արձանացեալ մէկ ձեռքով վեր կը վերցնէր զերկիր որ կ'գլորէր կորստեան անդընդին մէջ, և միւսով կը ջնջէր իր արեամբն երկնից երեսէն մարդկութեան վճռուած դատակնիքը: Նա՞ դու կը տարակուսի՞ս:..

ՍՈՆԴՈՒԽՏ. Ամէն բանի պատրաստ եմ ես.. բայց Երուանդ.. քիչ մ'առաջ հեռացաւ ասկէ լի ցասմամբ:..

ԹՈԴԻԶՈՍ. Լսէ... ինքը քրիստոնեայ եղաւ:..

ՍՈՆԴՈՒԽՏ. Ո՜վ անպատում խնդութիւն.. քրիստոնեա՞յ.. և ի՞նչպէս:..

ԹՈԴԻԶՈՍ. Շնչասպառ ընկողմանած էր փոսի մը քով՝ և չէր կրնար իր նուաղեալ աչքերը վերցնել: Երբ անոր հեծեծանքը լսեցի փութացայ օգնել իրեն, որ տեսնելով զիս տխուր ձայնով գոչեց. "Ի սէր Աստուածոյն զոր կ'պաշտես՝ օգնէ ինծի.. Յուսահատ առանձին կը մեռնիմ ես ահա... կաթիլ մը ջուր... պապակեալ շրթունքս կայրին": Աս ըսելով՝ արիւնը դունդաղունդ կը վազէր, և ուժը կ'սպառէր: Մոլորահետ առուակին յստակ ջրէն սաղաւարտին մէջ լեցուցի, և իրեն տալով՝ կապեցի վէրքերը և քիչ մը շունչ առաւ: "Որդեակ իմ, ըսի իրեն՝ մի յուսահատիր. վաղ կամ անագան, պէտք է թողունք աշխարհս": Ա՜հ գոչեց՝ երբեք չեմ վախցած մահուընէ. ան շատ անգամ իմ սրոյս պաշտօնեայն եղած է. այլ ան անձը որուն համար քաղցր էր ինձ կեալ և մեռանել՝ նոյն ինքը կը թողու որ իմ մանկութիւնս արեանց մէջ թողումի:.. "Նա քիչ մը դադարելէն վերջը": Ե՛լ գնա՛ ըսաւ, բարի ծերունի շնորհակալ եմ քու երախտեացդ.. գնա՛ և թող որ մեռնիմ:.. Ափսոսեցի ես զինքը մինչև անժոյժ արտասուք իր աչքերէն վազեցին. ուզեց այն ատեն մկրտուիլ՝ և ես ամէն բան ըստ կրօնից պատուիրանացը կատարեցի: Նայէ՛ ահա ինքն իսկ կուգայ:

# ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՆՈՅՆՔ ԵՒ ՍՐԲՈՒՀԻ (Զօրանէ յետեւը՝ ի գերութեան)

ՍՐԲՈՒՀԻ. (Աչքովը, ձեռքը ընծայելով) Թողէք զիս՝ զօրականք: Սօս եկուր ինծի սիրելի... քովըս ինչեր յերկնից անձեղ հրեշտակ, և երկրիս եղերքներուն վրայ թափառող հոգի մը թող՝ որ քու լուսաւոր թևոցդ ապաւինած՝ ազատի իր վշտերէն:..

ՍԱՆԴՈՒԽՏ. Երթանք՝ մահուան տխուր ասպարէզներուն վրայէն՝ թռչին մեր հոգիները երկու անբաժան աստղերու նման:..

ՍՐԲՈՒՀԻ. Այլ մի թողուր զիս .. կոյս .. եթէ կենաց ընկեր չներեցին երկինք որ ըլլամ քեզի, եթէ փառաց աթոռը միատեղ չկրցանք նստիլ՝ նոյն գերեզմանին մէջ միատեղ թող հանգչին մեր ոսկերքը.. այն վեմին վրայ կախեն իմ մատանիներըս, իմ սուրս.. և քանի մը անթառամ ծաղիկ սփռեն որ մեր.. սէրը... յիշեցնեն: . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Տես.. փառաւետուր թևերնին մեր չորս կողմը թրթռացնելով յաւերժս կը հրաւիրեն զմեզ զուարթունք.. հոն պիտի ըլլայ մեր հարսանեաց առագաստը... հոն... երջանկաւէտ և անմահաբեր կ'ընծայուի մեզի:..

ՍՐԲՈՒՀԻ. Ո՜հ ինչ քաղցր ինչ մխիթարական զգացմունք.:. երբ աչքս յերկինուստ երկրիս վրայ դարձնեմ.. և տեսնեմ.. որ նոյն խաչին ստուերը մեր երկուքին շիրմացը վրայ կը ծաւալի:..

ՍԱՆԴՈՒԽՏ. Տես ինչպէս մեզի դէմ կը զինուի աշխարհ... կարծես թէ երկինք կը բորբոքին՝ հոն արշաւող հրեղէն կառքերէն . . . լսե՞ս ինչ քաղցր ներդաշնակութիւն կը հնչէ հեռուէն . . ոհ ծաղկապսակ ոգեղիներու պէս՝ զուարթ զինենք սեղանը:..

ՍՐԲՈՒՀԻ. Երբ թառամին ծաղկունք... երբ շիջանին եթերալոյս ջահերը և երկինք հիմնայատակ կործանին, այն տիեզերական գերեզմանին մէջէն՝ սիրեցեալդ իմ մեր հոգիներն ելլելով՝ պիտի խնդրեն զիրար. այն մահահամբոյր լռութեան մէջ՝ պիտի պատասխանեն իրարու:... Բայց ես... ես կ'ըն-ւաղիմ . .. աչքերէս լոյսը կը կորսուի... կ'անհետանայ երկիր . . . ո՜հ . . . ո՞ւր կը տանին զիս . . ո՞ւր . . . հետս եկուր՝ Սանդուխտ . . . ի՞նչ զեփյ-

լուծն . . . ոհ կմեկնիմ աշխարհէս : . . Արիւնս՝ հայրենեաց . . . սիրտս՝ քեզի . . . հոգիս՝ Աստուծոյ նուիրեցի : . . Ողջամբ մնա . . . ՚Երկնից վայելքներու մէջ . . . անձկաւ կ՚սպասեմ . . . քեզի : . . (կմեռնի .)

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԴՈՒՔՍ

ԴՈՒՔՍ. Այս՝ և դու ծերունի, թողուցէք այս բանտը և հետս եկէք : . .

ՍԱՆԴՈՒԽՏ. ([illegible]) Ի՛ սէր Աստուծոյ, հոս թող զիս:

ԴՈՒՔՍ. Ի՛նչ : . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Հա՛ս, այս մարմնոյս վրայ սպաննեցէք զիս : . .

ԴՈՒՔՍ. Չափազանց խօսեցար՝ երթանք : . .

ՍԱՆԴՈՒԽՏ. Աստուծոյ սիրուն՝ հոս խողխողէ զիս : . .

ԹԱԴԷՈՍ. Այս՝ խմէ այս բաժակը մինչև յատակը : . .

ՍԱՆԴՈՒԽՏ. (Նուաղելով) Հա՛յր՝ երթանք : . .

## ՏԵՍԱՐԱՆ Է.

ԸՆԴԱՐՁԱԿ ԴԱՇՏ

ՍԱՆԴՈՒԽՏ ԵՒ ԴՈՒՔՍ ([illegible])

ՍԱՆԴՈՒԽՏ. Մխիթարութեան ժամը հասեր : Ընդունէ սիրտս, ովին հանդուրժեմս աշջրիանդ յաւէս ողջոյնը բանը . . և մինչչեւ ինքը ապրէր կը թափէ՝ քու աչքերէդ արցունք մ՚ալ ովին չէկաթէ : . . Դու դու արև վարհուրած ևս ովին չ՚դարձնես աժինները նըր սեանն հայրենիք սուսերամերկ իր հոր աչքերուն վրայ : . . Ի՛նչ . . ինքը ովին մեռնի, և ես ապրիմ : Ովին չկարծեմ իմ աչքերս հօրս նեաց խաւրել՝ մինչչեւ ինծմէ հեռու . . իր կինայ դեռափըթիթ ծաղիկը ոտքիս տակ կը կոխկռտեմ : . . Ա՜հ երբ դուռնաւին այն շղթաները՝ երբ այն սիրտը ա՛լ չբաբախէ՝ ովին չկարծեմ որ կը բանայ աչքերս և արթննալով զէրեմ ովին վրայ՝ և իր հեշտալուր ձայնովը հայր՝ կոչելով զիս ովին գրկէ՝ ովին գգուէ : . . Ո՜հ երբ

ճնքը մեռնի, երբ մեռնի իմ սըր-տիս միակ սէրը՝ ի՞նչ պիտի ըլ-լայ Սանատրուկ եթէ ոչ գերեզ-մաններու վրայ թափառող ըն-կուր ստուեր մը՝ փառաց ճա-ռագայթներով պսակուած: Ով գիր՝ կը ցնորի՛մ, թէ արդա-րեւ ձեռք մը Աստղային աղօտ և նախամաստուէր ճակտին վրայ արեան տառերով իմ անունս կը գրէ.. պարծանքով կ՚անց-նէին ազգք և ազինք.. Աշխարհըն-գիր Երկինքթող ձեր կայծա-կըն իջնայ իր գլխուն վրայ՝ որ զիս ալ իւրն հետ թերեւս յա-ճիւն փոխէ... ապա թէ ոչ՝ ո՞ւր պիտի գտնէ Սանատրուկ խա-ղաղութիւնը... եղկելս իւրեն յիշատակներովը լի է... և գե-րեզմանին մէջ իր արիւնլուայ ստուերը լուռ կեցած կ՚սպասէ ինծի:.. Բայց ինչ.. ինքը իմ աղջիկս չէ... մերժեց զիս խո-պառ.. իր հայրը՝ իր փառքը՝ իրեն ամէն բանը ինծի թշնամի Աստ-ւած մի է.. Թող գոհ ըլլայ ու-րեմն Արամազդայ և Սանա-տրուկդ պատուոյն:.. Ահա կը մօտենան... բոց մը երակէ երակ կը խլոտի.. մազերս կը ցցուին գլխուս վրայ.. անհաշտ Սա-տանայք տարտարոսաց՝ շնչեցէք ոգւոյս մէջ ատելութեան բա-ցը:..

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՆՈՅՆ ՔԵՐԴՈՂ ՍԱՆԴՈՒԽՏ.

ՔԵՐԴՈՂ. Ահաւասիկ կամք՝ տէրքս:..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ո՞ւր է ամպարիշ-տը:..

ՔԵՐԴՈՂ. Աշտարակէ ընկճեալ՝ նուաղած է ամէն կողմ:..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Ել, արթնցիր.. Նայէ այս քու արեանդ ծարա-ւի զէնքերը:..

ՍԱՆԴՈՒԽՏ. (Արթնալով) Դեռ կ՚ապրի՞մ... կարծէի թէ թողուցած ըլլալ աշխէն պաշխարհ:..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. Արիւնլուայ զըր-քերը բացած՝ քեզի կ՚սպասէ մահը:..

ՍԱՆԴՈՒԽՏ. Պիտի մեռնիմ... այո.. բայց դու ՚ի սէր այն գո-րովանաց զոր ունէիր վասն եր-բեմն: Արեան մէջ մարի քու կատաղութիւնդ... թող մ՚ըլլայ չկրկնես այս խղճամիտ գազրէ քու գայրոյթդ.. և երբ մեռնիմ զիս ամէնքը՝ թշուառ-քրիստոնեայ մը հոն ապաւինե-լով յիշէ զիս և լայ:..

ՍԱՆԱՏՐՈՒԿ. (Ա՛ռ Դահճին) Ին-չո՞ւ կ՚ուշանաք:..

ՔԵՐԴՈՂ. Ել երթանք՝ կոյս..

Բայց․․ ով կը պատռէ աչքիս դէմ ապագային քօղը․․ ո՞վ ըլլու զիս մարգարէական մայույթեամբ:․․ Ինչ զարհուրելի և աղանդներ կը բացուին առջեւըս :․․ Ահա կը կործանին մեհեանք․․ կը դողան թագաւորք և Աստուածք․․ և այն տեսիլերական մթութեան մէջ՝ երկնից և երկրի մէջ տեղ՝ բոցանշոյլ խաչ մը կ՚արձանանայ իբրև կապ երկուքին : Ո՞ւր էք Աստուածք Ողիմպոսի․․ Նայեցաւ Բարձրեալը և անհետացաք : Բիւրաւոր ծաղկապսակ հոգիք կը սլանան դէպ՚ի երկինք :․․ Ո՞րն է այն երկիրը որ կրկին անգամ մարդկութեան օրօրոցն եղած է : Սոխալուկ գաղաներու նման՝ արեան հեղեղները ժայռերուն վրայէն կը դահավիժեն : Արդեօք այն արիւնները վրէ՞ժ կը խնդրեն թէ մարին պիտի անոնց մէջ այն ահաւոր վճիռները զոր անջինջ տառերով Արդարութիւնը իր ճակտին վրայ գրեց :․․ Աւաղ․․ իր մահաբեր գեղեցկութեան զմայլած բիւրաւոր աշխարհակալք վրան կը յարձակին՝ և իր ճակտին զարդերը փրցնելով գլուխնին կը զարդարեն :․․ Ինչ երկար բոլոր աշխարհիս վահանն ըլլալէն վերջը՝ կը կործանի Հայաստան՝ և անոր աւերակացը վրայէն կզօղէն բարբարոս ժողովուրդք զարեւմուտս :․․․ Բայց դու Սանատրուկ ինչո՞ւ թափառական կը շրջիս նսեմաստուեր անտառաց մէջ :․․․ Իր փայլակնացայտ աչքերը վրադ դարձուցած՝ նուէրդ կուգայ անոր Արդարութիւնը և գժնեայ ժպիտ մը ականջէդ կը մրմռայ "Վրէժխնդրութիւն". անզօր սուրդ պատեանն դարձուր․ ահա անծանօթ ձեռքէ սլացած նետ մը՝ վախճան կը դնէ անօրէնութեանցդ․․․ քու փառացդ խրոխտ շէնքը գերեզմանի մը մէջ կը կործանի կ՚անհետանայ : ․․․ Ալ մշտայաղթ կրօնքը ազգայ՝ ժամանակաց և Աստուածոց աւերակներուն վրայ ծփալով՝ ինչպէս տապանակը ջրհեղեղին վրայ՝ անվնաս կը հասնի անձկաւէտ նաւահանգիստը :․․ Դու ևս ով կոյս՝ դու ևս սփոփուէ : Տես ինչպէս Հայաստան կը խոնարհի գերեզմանիդ վրայ որ իր նախատինքն ու պարծանքն է :․․ Պատկառելով կ՚անցնին անոր վրայէն Դարերը :․․

ՍԱՆԱՏՐՈՒԿ․ (Դաշոյնը ցուցնելով) Ահա ով պիտի լռեցնէ քու յանդուգն շրթունքներդ․ զօրականք՝ նետաձիգ սպաննեցէք այս թշուառները :․․

ԲՐԴԻՍՕՍ․ Խաղաղութիւն իջնայ քու վրադ Հայաստան :․․ (Իյնան ՚ի մի հոյս․ առանձնանայ

Սանտորիօն. ժողովուրդն յառաջ մտանէ։)

Ա. Տես ինչ աներկիւղ կե-ցեր է սա կոյսը։..

Բ. Զհանդուրժեր սիրտս այս տանջանքը տեսնելու. ան-մեղ էր ան։..

Գ. Բարեկամք, բարեկամք սա հրաշքը նայեցէք։..

Ա. Ով տէր.. փախչինք.. Նետերը իր մարմնոյն մէջ չեն մնար՝ այլ ետ դառնալով դա-հիճները կ'սպաննեն։..

ԴԱՀԻՃՔ. ('ի հեռաստ կիռնէն որ անկանին) Ո՜հ . . Ներէ կոյս սրբուհի.. ոհ։..

ԺՈՂՈՎՈՒՐԴ. (ժողովուրդք) կու-լայ Սանդուխտ.. կուլայ։..

Բ. Անշուշտ իր թշնամեա-ցը համար կուլայ և կ'աղօ-թէ։ . .

Գ. Աս ինչ փայլակ է . . չորս կողմէն լոյս կանձրևէ։..

Ա. Ահա կ'իյնայ.. կը լողայ արեանց մէջ.. լռութիւն։.։

Գ. Աչքերնիդ երկինք դարձու-ցէք.. բացանշոյլ պատմուճա-նով մէկը կ'իջնայ.. սա երկ-նաւորը Սրուանդ չէ՞ մի։..

(ժողովուրդք համօրէն) ինքն է . . ինքն է։ . .

Գ. Լերանց ծայրերը նայե-ցէք . . հրեղէն կառքերու պէս ամպեր իջեր են . . ինչ քաղ-ցր ներդաշնակութիւն կը լսուի.. Տեսէք, Սանդուխտը 'ի ծունր իջեալ մահուան վէրքը բռնելով կարծես կ'աղօթէ։..

Բ. Մեծ է Սանդուխտին Աստուածը։..

Ա. Ահա թագաւորը կ'ըս-թափի իր թմրութենէն։..

Ա. Սանդուխտին Աստուածը մերն ալ ըլլայ։..

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Երանամք՝ (ծու-նր կրկնեն)։ . .

ՍԱՆԱՏՐՈՒԿ. (Ցնորեալ յառաջա-նայ) Թո՛ղ զիս թող զիս, ա-հարկու Սաւեր, ինչո՞ւ արե-նանիշ սպիտակ պատմուճա-նաւդ հողւոյս վրայ իջնալով արթնցուցիր զայն իր մահաբեր թմրութենէն.. Բոցեղէն ամպ մը կը պատէ երկինքը . . ար-եան ծով մը կ'ողողէ չերկեր . . . զիս խեղդելու կուգայ.. . . Իմ աղջիկս . . իմ աղջիկս տեսնեմ.. և մեռնիմ։ Ո՞ւր ես իմ . . ա՜հ . . պատասխան չե՞ք տար ինծի դահիճք . . իմ աղջիկս դարձուցէք ինծի՝ դրկա-ցս մէջ սեղմեմ աղջիկս՝ և թող զայրացած Աստուածք իրենց բոլոր կայծակները ծակոտին վը-րայ սպառեն։ Ի՞նչ . . . մե-ռա՞ւ . . այն երկաթը որ իր արեամբը կարմրցաւ՝ մխեցէք ծոցիս մէջ. տեսէք . . իր ան-մեղ կողերէն արիւնները կը վազեն . . . ո՞վ թափեց զայն . . . ոհ լացէք թշուառ հօր մը՝ լացէք անգութ որդեսպանի մը

վրայ . . . (Քնանալ էր յարմանէ աղջկանը մարմնոյն վրայ էր ինկեր) Գիտե՞սաք իմ Սանդուխտ . . տես որուն գիրկը մէջն ես . . ժպիտ մը . . խօսք մը . . նայւածք մը . . . մոռցիր վայրկեան մը քու դաշինդ և հօր մը արցունքներդ տես . . Սանդուխտ : . . (Արտասուելով աղջկէնը նետուելով.) բայց ո՛չ կարծր . . դեռ կենաց նշոյլ մը էր դալուկ շրթանցը վրայ կ'շողայ . . չէ՝ չկրնար ըլլալ որ երկնից կայծակը ծաղիկներէ՝ և բուռը ձըգէ . . . իր արդէն բշխած արիւնը դեռ տաքէ . . Սանդուխտ, դուստր իմ Սանդուխտ : . .

ՍԱՆԴՈՒԽՏ . (Հոգին աւանդելով) Հայր . . . կ'ներեմ . . քեզի : . .

ՍԱՆԱՏՐՈՒԿ . Կեցի՛ր . . ինծի . . . ինծի կ'ներես . . . ո՛չ ան տանն վայրկեան մ'ալ ապրել որ դաշնձիդ մահը տեսնեմ : . . Բայց ինչ . . կ'գոցես աչքերդ յաւիտեան . . ո՛չ . . . ալ Սանդուխտս չկա՛յ . . . Թըշուա՛ռ Հայր . . . անգութ Դիք . . . Ե՛յ դու վրէժ լուծեցիր՝ այո՛ յաղթեցիր դո՛ւն Հրէից Աստուած : . :

ՎԵՐՋ.

Գինն է [redacted] Ր. 50 Կ.

7-62